

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի 2001 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 6/2002 (ԵՀ) կանոնակարգ

Համայնքի արդյունաբերական նմուշների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒԴԴՆ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 308–րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

Քանի որ.

1) Համայնքի ամբողջ տարածքում միատեսակ գործողությամբ և հավասարաչափ պահպանություն ունեցող Համայնքի արդյունաբերական նմուշի ձեռքբերման միասնական համակարգը կնպաստի Համայնքի՝ Պայմանագրով սահմանված նպատակների իրականացմանը,

2) միայն Բենիլյուքսի երկրներն են արդյունաբերական նմուշի պահպանության վերաբերյալ միասնական իրավական նորմեր ընդունել: Մնացած բոլոր անդամ պետություններում արդյունաբերական նմուշների պահպանությունը ներպետական իրավունքի համապատասխան նորմերի կարգավորման առարկան է և սահմանափակվում է տվյալ անդամ պետության տարածքով: Հետևաբար, հնարավոր է, որ նույնական արդյունաբերական նմուշները տարբեր անդամ պետություններում պահպանվեն տարբեր կերպ և տարբեր սեփականատերերի օգտին: Դա անխուսափելիորեն հանգեցնում է հակասությունների անդամ պետությունների միջև առևտրի ընթացքում,

3) անդամ պետությունների՝ արդյունաբերական նմուշի մասին իրավական ակտերի միջև էական տարբերությունները խոչընդոտում և խաթարում են մրցակցությունն ամբողջ Համայնքի մակարդակով: Արդյունաբերական նմուշ ներառող արտադրանքի ներքին առևտրի և դրանց միջև մրցակցության հետ համեմատ՝ Համայնքի ներսում առևտուրը և մրցակցությունը խոչընդոտվում և խաթարվում են հայտերի, գրասենյակների, ընթացակարգերի, իրավական

¹ ՊՏ, C 29, 31.01.1994թ., էջ 20 և ՊՏ, C 248, 29.08.2000թ., էջ 3:

² ՊՏ, C 67, 1.03.2001թ., էջ 318:

³ ՊՏ, C 110, 2.05.1995թ., և ՊՏ, C 75, 15.03.2000թ., էջ 35:

ակտերի և պետության տարածքով սահմանափակված բացառիկ իրավունքների մեծ թվով, ինչպես նաև ընդհանուր վարչական ծախսերով, որոնք ուղեկցվում են հայտատուի համար համապատասխանաբար մեծ ծախսերով և տուրքերով: «Արդյունաբերական նմուշների իրավական պահպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 98/71/ԵՀ հրահանգը⁴ նպաստում է այդ իրավիճակի շտկմանը,

4) արդյունաբերական նմուշի պահպանության գործողությունը, սահմանափակված լինելով առանձին անդամ պետությունների տարածքով, անկախ այն հանգամանքից, թե այդ պետությունների իրավական ակտերը համապատասխանեցված են, թե ոչ, տարբեր անհատների ներպետական իրավունքների օբյեկտ հանդիսացող արդյունաբերական նմուշ ներառող արտադրանքի առումով հանգեցնում է ներքին շուկայի հնարավոր բաժանման և, հետևաբար, խոչընդոտում է ապրանքների ազատ տեղաշարժը,

5) դա պահանջում է ստեղծել յուրաքանչյուր անդամ պետությունում անմիջականորեն գործող Համայնքի արդյունաբերական նմուշ, քանի որ միայն այդ կերպ է հնարավոր մեկ իրավական ակտով սահմանված մեկ ընթացակարգով Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին ներկայացված մեկ հայտով բոլոր անդամ պետություններն ընդգրկող մեկ տարածքի համար ձեռք բերել արդյունաբերական նմուշի նկատմամբ մեկ իրավունք,

6) քանի որ առաջարկվող գործողության նպատակներին, մասնավորապես, բոլոր անդամ պետություններն ընդգրկող մեկ տարածքի համար արդյունաբերական նմուշի նկատմամբ մեկ իրավունքի պահպանությունը, չեն կարող բավարար չափով հասնել անդամ պետությունները Համայնքի արդյունաբերական նմուշի, ինչպես նաև դրանով զբաղվող մարմնի ստեղծման մասշտաբի և ազդեցության պատճառով, և, հետևաբար, առավել հեշտ է դրան հասնել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է ակտեր ընդունել՝ համաձայն Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքի: Այդ նույն հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքից ելնելով՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու համար,

7) արդյունաբերական նմուշի ընդլայնված պահպանությունը խթանում է ոչ միայն անհատ դիզայներների օժանդակությունը՝ այդ բնագավառում Համայնքի ընդհանուր գերակայությանը, այլև նորարարությունը և նոր արտադրանքների մշակումը, ինչպես նաև ներդրումները դրանց արտադրության մեջ,

8) հետևաբար, արդյունաբերական նմուշի՝ ներքին շուկայի կարիքներին հարմարեցված պահպանության ավելի մատչելի համակարգն առանցքային է Համայնքի արդյունաբերության ճյուղերի համար,

9) արդյունաբերական նմուշի վերաբերյալ իրավունքի մասին սույն Կանոնակարգի նյութաիրավական դրույթները պետք է համապատասխանեցվեն թիվ 98/71/ԵՀ հրահանգի համապատասխան դրույթներին,

10) տեխնոլոգիական նորարարությունը չպետք է խոչընդոտվի բացառապես տեխնիկական գործառույթով պայմանավորված հատկանիշներին արդյունաբերական նմուշի պահպանություն

⁴ ՊՏ, L 289, 28.10.1998թ., էջ 28:

շնորհելով: Հասկանալի է, որ դա չի ենթադրում, որ արդյունաբերական նմուշը պետք է գեղագիտական որակ ունենա: Նմանապես, տարբեր տիպի արտադրանքների գործառնական համատեղելիությունը չպետք է խոչընդոտվի՝ մեխանիկական սարքավորումների մարմնավորած արդյունաբերական նմուշին պահպանություն շնորհելով: Հետևաբար, արդյունաբերական նմուշի այն հատկանիշները, որոնց վերը նշված պատճառներով պահպանություն չի շնորհվում, չպետք է հաշվի առնվեն գնահատելիս, թե արդյոք արդյունաբերական նմուշի մյուս հատկանիշները բավարարում են պահպանության համար անհրաժեշտ պահանջները,

11) այնուամենայնիվ, մոդուլային արտադրանքի մեխանիկական սարքավորումները կարող են մոդուլային արտադրանքի նորարար հատկանիշների կարևոր բաղադրիչ կազմել և շուկայավարման էական միջոց հանդիսանալ և, հետևաբար, պետք է պահպանունակ լինեն,

12) Պահպանություն չպետք է շնորհվի այն բաղադրիչ մասերին, որոնք արտադրանքի բնականոն օգտագործման ժամանակ տեսանելի չեն, և ոչ էլ այդ մասերի այն հատկանիշներին, որոնք տեսանելի չեն այդ բաղադրիչ մասի մոնտաժման դեպքում կամ որոնք առանձին չէին բավարարի նորության և ինքնատիպության պահանջները: Հետևաբար, արդյունաբերական նմուշի այդ հատկանիշները, որոնց նշված պատճառներով պահպանություն չի շնորհվում, չպետք է հաշվի առնվեն գնահատելիս, թե արդյոք արդյունաբերական նմուշի մյուս հատկանիշները բավարարում են պահպանության համար անհրաժեշտ պահանջները,

13) համալիր արտադրանքի նախնական տեսքը վերականգնելու համար դրա վերանորոգումը թույլ տալու նպատակով պահպանվող արդյունաբերական նմուշի օգտագործման մասին անդամ պետությունների իրավական ակտերի ամբողջական համապատասխանեցումը հնարավոր չէ իրականացնել թիվ 98/71/ԵՀ հրահանգի միջոցով, եթե արդյունաբերական նմուշը կիրառվում կամ ներառվում է այն համալիր արտադրանքի բաղադրիչ մաս կազմող որևէ արտադրանքի մեջ, որի արտաքին տեսքից է կախված պահպանվող արդյունաբերական նմուշը: Նշված Հրահանգի հիման վրա համաձայնեցման ընթացակարգի շրջանակներում Հանձնաժողովն այդ Հրահանգի փոխատեղման վերջնաժամկետից երեք տարի հետո նախաձեռնել է այդ Հրահանգի դրույթների հետևանքների վերանայումը՝ մասնավորապես այն արդյունաբերական հատվածների համար, որոնց այդ դրույթներն ամենաշատն են վերաբերում: Այդ հանգամանքներում նպատակահարմար է որպես Համայնքի արդյունաբերական նմուշի՝ պահպանություն չշնորհել այն արդյունաբերական նմուշին, որը կիրառվում կամ ներառվում է այն համալիր արտադրանքի բաղադրիչ մաս կազմող արտադրանքի մեջ, որի արտաքին տեսքից է կախված արդյունաբերական նմուշը և որն օգտագործվում է համալիր արտադրանքի նախնական տեսքը վերականգնելու համար դրա վերանորոգման նպատակով, քանի դեռ Խորհուրդը Հանձնաժողովի առաջարկի հիման վրա այդ հարցի շուրջ իր դիրքորոշումը չի հստակեցրել,

14) արդյունաբերական նմուշի ինքնատիպության գնահատումը պետք է հիմնված լինի այն բանի վրա, թե արդյոք արդյունաբերական նմուշը դիտող տեղեկացված սպառողի վրա թողնված ընդհանուր տպավորությունն ակնհայտորեն տարբերվում է գոյություն ունեցող արդյունաբերական նմուշի հավաքակազմի՝ այդ նույն սպառողի վրա թողած տպավորությունից՝ հաշվի առնելով այն արտադրանքի բնույթը, որում արդյունաբերական նմուշը կիրառվել է կամ ներառվել, և, մասնավորապես, այն արդյունաբերական հատվածը, որին այն պատկանում է, ինչպես նաև արդյունաբերական նմուշը ստեղծելիս դիզայների ազատության աստիճանը,

15) Համայնքի արդյունաբերական նմուշը պետք է հնարավորինս ծառայի Համայնքի արդյունաբերության բոլոր հատվածների կարիքներին,

16) այդ հատվածների որոշ մասը թողարկում են մեծ թվով արդյունաբերական նմուշներ այն արտադրանքների համար, որոնք հաճախ շուկայում կարճ կյանք են ունենում, և որոնց դեպքում պահպանությունն առանց գրանցման հետ կապված ձևականությունների բեռի առավելություն է, իսկ պահպանության տևողությունն այդքան մեծ նշանակություն չունի: Մյուս կողմից, գոյություն ունեն արդյունաբերության հատվածներ, որոնք գնահատում են գրանցման առավելությունները՝ իրավական որոշակիության առավել բարձր աստիճան ապահովելու առումով, և որոնք շուկայում իրենց արտադրանքի կյանքի կանխատեսելի տևողությանը համապատասխան երկարաժամկետ պահպանության հնարավորություն են պահանջում,

17) դա պահանջում է պահպանության երկու ձև. մեկը՝ կարճաժամկետ չգրանցված արդյունաբերական նմուշի, իսկ մյուսը՝ երկարաժամկետ գրանցված արդյունաբերական նմուշի ձևով,

18) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը պահանջում է ստեղծել և վարել գրանցամատյան, որտեղ կգրանցվեն բոլոր այն հայտերը, որոնք համապատասխանում են ձևական պայմաններին, և որոնք ներկայացնելու օրը, ամիսը և տարին (այսուհետ՝ թվականը) սահմանվել է: Գրանցման այդ համակարգը պետք է սկզբունքորեն հիմնված չլինի նախքան գրանցումը կատարվող ըստ էության փորձաքննության վրա, որն ուղղված է պահպանության պահանջների բավարարումը ստուգելուն՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով հայտատուների վրա դրվող գրանցման բեռը և այլ ընթացակարգային պարտականությունները,

19) Համայնքի արդյունաբերական նմուշը չպետք է պահպանվի, բացառությամբ, եթե նմուշը նոր է և այլ նմուշների համեմատ ինքնատիպ է,

20) նաև անհրաժեշտ է հեղինակին կամ նրա իրավահաջորդին թույլ տալ շուկայում փորձարկել արդյունաբերական նմուշը մարմնավորող արտադրանքը՝ նախքան որոշելը, թե արդյոք ցանկալի է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշից բխող պահպանությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ հեղինակի կամ նրա իրավահաջորդի կողմից արդյունաբերական նմուշի բացահայտումը կամ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելու թվականին նախորդող 12 ամիսների ընթացքում կատարված մոլորեցնող բացահայտումները չդիտվեն որպես անբարենպաստ հանգամանքներ տվյալ նմուշի նորությունը կամ ինքնատիպությունը գնահատելիս,

21) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով շնորհվող իրավունքի բացառիկ բնույթը համապատասխանում է դրա իրավական որոշակիության առավել բարձր աստիճանին: Այնուամենայնիվ, նպատակահարմար է, որ Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշով միայն կրկնօրինակումը կանխարգելելու իրավունք վերապահվի: Հետևաբար, պահպանությունը չի կարող վկայակոչվել արդյունաբերական նմուշ ներառող այն արտադրանքի դեպքում, որը մի երկրորդ հեղինակի կողմից անկախ ստեղծված նմուշի արդյունք է: Այդ իրավունքը պետք է տարածվի նաև իրավունքը խախտող արդյունաբերական նմուշներ մարմնավորող արտադրանքի առևտրի վրա,

22) այդ իրավունքների կիրարկումը պետք է թողնել ներպետական իրավական ակտերին: Հետևաբար, բոլոր անդամ պետություններում անհրաժեշտ է նախատեսել որոշ հիմնական միասնական պատժամիջոցներ: Այդ միջոցները պետք է հնարավոր դարձնեն իրավունքը խախտող գործողությունների դադարեցումը՝ անկախ այն իրավագործությունից, որում խնդրարկվում է իրավունքների կիրարկումը,

23) ցանկացած երրորդ անձ, որը կարող է հաստատել, որ Համայնքում սկսել է, նույնիսկ առևտրային նպատակներով, բարեխիղճ կերպով օգտագործել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության մեջ ներառված, սակայն դրանից չկրկնօրինակված որևէ նմուշ կամ լուրջ և արդյունավետ կերպով նախապատրաստվել է դրան, կարող է այդ նմուշի սահմանափակ օգտագործման իրավունք ստանալ,

24) սույն Կանոնակարգի հիմնարար նպատակն այն է, որ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի ձեռքբերման գործընթացը հայտատուի համար նվազագույն դժվարություն ներկայացնի և նրանից նվազագույն ծախսեր պահանջի՝ այն մատչելի դարձնելու ինչպես փոքր և միջին ձեռնարկությունների, այնպես էլ անհատ հեղինակների համար,

25) այն արդյունաբերական հատվածները, որոնք կարճ ժամանակահատվածներում թողարկում են հնարավոր կարճատև կիրառություն ունեցող մեծ թվով նմուշներ, որոնցից միայն որոշ մասն է ի վերջո առևտրայնացվում, նախապատվություն կտան Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշին: Ավելին, անհրաժեշտ է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն այդ հատվածների համար դարձնել առավել հասանելի: Հետևաբար, մի քանի նմուշներ մեկ հայտում համախմբելու տարբերակը կբավարարեր այդ անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, մի քանի նմուշների համար ներկայացվող հայտում ներառված արդյունաբերական նմուշները կարող են դիտարկվել միմյանցից անկախ՝ իրավունքների կիրարկման, լիցենզավորման, գույքային իրավունքների, բռնագանձում տարածելու, սնանկության վարկյթների, զիջման, երկարաձգման, փոխանցման, հետաձգված հրապարակման կամ անվավեր ճանաչելու նպատակով,

26) Համայնքի արդյունաբերական նմուշի գրանցմանը հետևող բնականոն հրապարակումը կարող էր որոշ դեպքերում վնասել կամ վտանգի տակ դնել նմուշի հետ կապված առևտրային գործարքի հաջողությունը: Հրապարակումը ողջամիտ ժամանակահատվածով հետաձգելու հնարավորությունը թույլ է տալիս լուծում գտնել նման դեպքերում,

27) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի վավերությանն առնչվող հայցերի՝ մեկ ընդհանուր վայրում քննելու ընթացակարգը կբերի ծախսերի և ժամանակի խնայողության՝ համեմատած տարբեր ներպետական դատարաններ ներգրավող ընթացակարգերի հետ,

28) հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել երաշխիքներ՝ ներառյալ Բողոքարկման խորհուրդ և, ի վերջո, Արդարադատության դատարան բողոք բերելու իրավունքը: Նման ընթացակարգը կօգնի Համայնքի արդյունաբերական նմուշի վավերությունը կարգավորող պահանջների միատեսակ մեկնաբանության ձևավորմանը,

29) կարևոր է, որ Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքները հնարավոր լինի արդյունավետ կերպով իրականացնել Համայնքի ամբողջ տարածքում,

30) դատավարության համակարգը պետք է լինի այնպիսին, որ նվազագույնի հասցնի դատավարության մասնակիցների կողմից «հարմար» դատարան ընտրելու հավանականությունը (forum shopping): Հետևաբար, անհրաժեշտ է սահմանել միջազգային իրավասության հստակ կանոններ,

31) սույն Կանոնակարգը չի խոչընդոտում Համայնքի արդյունաբերական նմուշներով պահպանվող արդյունաբերական նմուշների նկատմամբ անդամ պետությունների

արդյունաբերական սեփականության վերաբերյալ իրավական ակտերի կամ այլ համապատասխան իրավական ակտերի կիրառմանը, ինչպիսիք են՝ արդյունաբերական նմուշի՝ գրանցման միջոցով ձեռք բերված պահպանությանը կամ չգրանցված արդյունաբերական նմուշների, ինչպես նաև ապրանքային նշաններին, արտոնագրերին և օգտակար մոդելներին, անարդար մրցակցությանը կամ քաղաքացիական պատասխանատվությանը վերաբերող իրավական ակտերը,

32) հեղինակային իրավունքի մասին իրավական ակտերի լիակատար համապատասխանեցման բացակայության պայմաններում կարևոր է հաստատել Համայնքի արդյունաբերական նմուշի և հեղինակային իրավունքի մասին իրավական նորմերի համաձայն պահպանության «կուտակման» սկզբունքը՝ միննույն ժամանակ ազատ թողնելով անդամ պետություններին՝ հեղինակային իրավունքի պաշտպանության աստիճանը և նման պաշտպանություն շնորհելու պայմանները սահմանելու հարցում,

33) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28–ի թիվ 1999/468/ԵՃ որոշման համաձայն⁵,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Համայնքի արդյունաբերական նմուշը

1. Սույն Կանոնակարգում նշված պայմանները բավարարող արդյունաբերական նմուշն այսուհետ կոչվում է «Համայնքի արդյունաբերական նմուշ»:

2. Արդյունաբերական նմուշը պահպանվում է՝

ա) «Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշով», եթե այն հանրամատչելի է դարձել սույն Կանոնակարգով սահմանված կարգով.

բ) «Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով», եթե այն գրանցվում է սույն Կանոնակարգով նախատեսված կարգով:

3. Համայնքի արդյունաբերական նմուշն ունի միասնական բնույթ: Այն Համայնքի ողջ տարածքում գործում է հավասարապես. Այն կարող է գրանցվել, փոխանցվել, զիջվել, անվավեր ճանաչվել, ինչպես նաև դրա օգտագործումը կարող է արգելվել բացառապես ամբողջ Համայնքի կտրվածքով: Այս սկզբունքը և դրա հետևանքները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով:

⁵ ՊՏ, L 184, 17.07.1999թ., էջ 23:

Հողված 2

Գրասենյակը

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակը, այսուհետ՝ Գրասենյակ, հիմնադրված Համայնքի ապրանքային նշանի մասին Խորհրդի 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 կանոնակարգով (ԵՀ)⁶, այսուհետ՝ «Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգ», կատարում է սույն Կանոնակարգով իր վրա դրված խնդիրները:

ԲԱԺԻՆ II

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մաս 1

Պահպանության պահանջները

Հողված 3

Սահմանումներ

Սույն Կանոնակարգի իմաստով՝

ա) «արդյունաբերական նմուշ» նշանակում է ամբողջ արտադրանքի կամ դրա մի մասի արտաքին տեսքը, որը արտադրանքի և (կամ) դրա զարդանախշի բնորոշ հատկանիշների, մասնավորապես, գծերի, ուրվագծերի, գույների, ձևի, կազմվածքի և (կամ) նյութերի արդյունքն է.

բ) «արտադրանք» նշանակում է արդյունաբերական կամ տնայնագործական ցանկացած իր, ներառյալ նաև այն մասերը, որոնք պետք է մոնտաժվեն որպես համալիր արտադրանք, փաթեթվածքը, ձևավորումը, գրաֆիկական խորհրդանիշները և տպագրական տառաշարերը՝ բացառությամբ համակարգչային ծրագրերի.

գ) «համալիր արտադրանք» նշանակում է արտադրանք, որը բաղկացած է բազմաթիվ բաղադրիչներից, որոնք կարող են փոխարինվել չխոչընդոտելով արտադրանքի ապամոնտաժումը և վերամոնտաժումը:

Հողված 4

Պահպանության պահանջները

1. Արդյունաբերական նմուշը պահպանվում է Համայնքի արդյունաբերական նմուշով, եթե այն նոր է և ինքնատիպ:

⁶ ՊՏ, L 11, 14.01.1994թ., էջ 1: Թիվ 3288/94 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 349, 31.12.1994թ., էջ 83):

2. Համալիր արտադրանքի բաղադրիչ մաս կազմող արտադրանքի մեջ կիրառված կամ ներառված արդյունաբերական նմուշը համարվում է նոր և ինքնատիպ, միայն՝

ա) եթե բաղադրիչ մասը համալիր արտադրանքի մեջ ներառվելուց հետո վերջինիս բնականոն օգտագործման ընթացքում տեսանելի է մնում, և

բ) այնքանով, որքանով բաղադրիչ մասի այդ տեսանելի հատկանիշներն առանձին բավարարում են նորության և ինքնատիպության պահանջները.

3. Պարբերություն 2«ա»-ի իմաստով «բնականոն օգտագործում» նշանակում է օգտագործում վերջին սպառողի կողմից՝ բացառելով պահպանման, սպասարկման և վերանորոգման աշխատանքները:

Հոդված 5

Նորությունը

1. Արդյունաբերական նմուշը համարվում է նոր, եթե ոչ մի նույնական արդյունաբերական նմուշ հանրամատչելի չի դարձել՝

ա) Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ նախքան այն թվականը, երբ արդյունաբերական նմուշը, որի պահպանությունը խնդրարկվում է, առաջին անգամ հանրամատչելի է դարձել.

բ) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ նախքան արդյունաբերական նմուշի (որի պահպանությունը խնդրարկվում է) գրանցման հայտը ներկայացնելու թվականը կամ, եթե առաջնություն է խնդրարկվում՝ նախքան առաջնության թվականը:

2. Արդյունաբերական նմուշները համարվում են նույնական, եթե դրանց հատկանիշները տարբերվում են միայն ոչ էական մանրամասներով:

Հոդված 6

Ինքնատիպությունը

1. Արդյունաբերական նմուշը համարվում է ինքնատիպ, եթե տեղեկացված սպառողի վրա դրա թողած ընդհանուր տպավորությունը տարբերվում է այդպիսի սպառողի վրա ցանկացած այն արդյունաբերական նմուշի թողած ընդհանուր տպավորությունից, որը հանրամատչելի է դարձել՝

ա) Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ նախքան այն թվականը, երբ արդյունաբերական նմուշը, որի պահպանությունը խնդրարկվում է, առաջին անգամ հանրամատչելի է դարձել.

բ) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ նախքան գրանցման հայտը ներկայացնելու թվականը կամ, եթե առաջնություն է խնդրարկվում, նախքան առաջնության թվականը:

2. Ինքնատիպությունը գնահատելիս հաշվի է առնվում արդյունաբերական նմուշի ստեղծման ժամանակ հեղինակի ազատության աստիճանը:

Հոդված 7

Բացահայտումը

1. 5-րդ և 6-րդ հոդվածների կիրառման նպատակով, արդյունաբերական նմուշը համարվում է հանրամատչելի դարձած, եթե այն հրապարակվել է գրանցումից հետո կամ այլ կերպ, կամ ցուցադրվել, օգտագործվել է առևտրում կամ այլ կերպ բացահայտվել է նախքան հոդվածներ 5«1»«ա»-ում և 6«1»«ա»-ում կամ հոդվածներ 5«1»«բ»-ում և 6«1»«բ»-ում նշված թվականը՝ կախված հանգամանքներից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրադարձությունները բնականոն գործունեության ընթացքում ողջամտորեն չէին կարող բավականին հայտնի դառնալ տվյալ հատվածում մասնագիտացած և Համայնքում գործող շրջանակներին: Այնուամենայնիվ, արդյունաբերական նմուշը չի կարող հանրամատչելի դարձած համարվել բացառապես այն պատճառով, որ այն բացահայտվել է որևէ երրորդ անձի՝ գաղտնիության պահպանման ուղղակի կամ անուղղակի պայմաններով:

2. Բացահայտումը հաշվի չի առնվում 5-րդ և 6-րդ հոդվածների կիրառման նպատակով և եթե այն արդյունաբերական նմուշը, որի համար Համայնքի արդյունաբերական նմուշով պահպանություն է խնդրարկվում, հանրամատչելի է դարձել՝

ա) հեղինակի, նրա իրավահաջորդի կամ որևէ երրորդ անձի կողմից՝ հեղինակի կամ նրա իրավահաջորդի կողմից տրամադրված տեղեկության կամ ձեռնարկված գործողությունների արդյունքում, և

բ) հայտը ներկայացնելու կամ, եթե առաջնություն է խնդրարկվում, առաջնության թվականին նախորդող 12 ամիսների ընթացքում:

3. 2-րդ պարբերությունը կիրառվում է նաև, եթե արդյունաբերական նմուշը հանրամատչելի է դարձել հեղինակի կամ նրա իրավահաջորդի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով:

Հոդված 8

Տեխնիկական գործառույթով պայմանավորված արդյունաբերական նմուշները և համակցությունների արդյունաբերական նմուշները

1. Համայնքի արդյունաբերական նմուշ չեն կարող լինել արտադրանքի արտաքին հատկանիշները, որոնք պայմանավորված են բացառապես դրա տեխնիկական գործառույթներով:

2. Համայնքի արդյունաբերական նմուշ չեն կարող լինել արտադրանքի արտաքին հատկանիշները, որոնք պարտադիր պետք է վերարտադրվեն իրենց ճշգրիտ ձևով և չափերով, որպեսզի արտադրանքը, որում արդյունաբերական նմուշը ներառված է կամ կիրառված, կարողանա մեխանիկորեն կապակցված կամ տեղադրված լինել մեկ այլ արտադրանքի մեջ,

շուրջը կամ դիմաց այնպես, որ այդ իրերից յուրաքանչյուրը կարողանա կատարել իր գործառույթը:

3. Անկախ 2-րդ պարբերությունից և 5-րդ ու 6-րդ հոդվածներով սահմանված պայմանների համաձայն՝ Համայնքի արդյունաբերական նմուշ է այն նմուշը, որը ծառայում է մեկ մոդուլային համակարգում փոխադարձ փոխարինելի արտադրանքների բազմակի մոնտաժման կամ կապակցման հնարավորությունն ապահովելուն:

Հոդված 9

Հանրային կարգին և բարոյականությանը հակասող արդյունաբերական նմուշները

Համայնքի արդյունաբերական նմուշ չի կարող լինել այն նմուշը, որը հակասում է հանրային կարգին կամ բարոյականության ընդունված սկզբունքներին:

Մաս 2

Պահպանության շրջանակը և ժամկետը

Հոդված 10

Պահպանության շրջանակը

1. Համայնքի արդյունաբերական նմուշով տրամադրվող պահպանությունը կարող է վկայակոչվել ցանկացած արդյունաբերական նմուշի դեպքում, որը տեղեկացված սպառողի վրա չի թողնում Համայնքի արդյունաբերական նմուշի թողած տպավորությունից տարբերվող տպավորություն:
2. Պահպանության շրջանակը որոշելիս հաշվի է առնվում արդյունաբերական նմուշն ստեղծելիս հեղինակի ազատության աստիճանը:

Հոդված 11

Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի պահպանության ժամկետի սկիզբը և տևողությունը

1. 1-ին մասի պահանջները բավարարող արդյունաբերական նմուշը պահպանվում է Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշով երեք տարի ժամկետով՝ սկսած այն օրից, երբ նմուշն առաջին անգամ հանրամատչելի է դարձել Համայնքում:
2. 1-ին հոդվածի նպատակներով՝ արդյունաբերական նմուշը համարվում է Համայնքում հանրամատչելի դարձած, եթե այն հրապարակվել է, ցուցադրվել է, օգտագործվել է առևտրում կամ այլ կերպ բացահայտվել է՝ այնպես, որ բնականոն գործունեության ընթացքում այդ իրադարձությունները կարող էին ողջամտորեն բավականին հայտնի դառնալ տվյալ հատվածում մասնագիտացած և Համայնքում գործող շրջանակներին: Այնուամենայնիվ, արդյունաբերական նմուշը չի կարող հանրամատչելի դարձած համարվել բացառապես այն

պատճառով, որ այն բացահայտվել է որևէ երրորդ անձի՝ գաղտնիության պահպանման ուղղակի կամ անուղղակի պայմաններով:

Հոդված 12

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության ժամկետի սկիզբը և տևողությունը

Գրասենյակի կողմից գրանցվելուց հետո 1-ին մասի պահանջները բավարարող արդյունաբերական նմուշը պահպանվում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով հինգ տարի ժամկետով՝ սկսած հայտը ներկայացնելու թվականից: Իրավատերը կարող է պահպանության ժամկետը երկարաձգել հինգ տարի տևողությամբ մեկ կամ ավելի ժամկետներով, սակայն մինչև 25 տարի ընդհանուր ժամկետով՝ սկսած հայտը ներկայացնելու թվականից:

Հոդված 13

Գործողության ժամկետի երկարաձգումը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է իրավատիրոջ կամ վերջինիս կողմից ուղղակիորեն լիազորված անձի դիմումի համաձայն՝ երկարաձգման համար տուրքը վճարելու պայմանով:
2. Գրանցման գործողության ժամկետը լրանալուց առաջ Գրասենյակն այդ մասին պատշաճ ժամկետում տեղեկացնում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի իրավատիրոջը, ինչպես նաև ցանկացած այլ անձի, որն ունի 72-րդ հոդվածում նշված Համայնքի արդյունաբերական նմուշների գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան՝ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի առնչությամբ) գրանցված որևէ իրավունք: Գրասենյակը պատասխանատվություն չի կրում նշված տեղեկությունը չտրամադրելու համար:
3. Գործողության ժամկետը երկարաձգելու համար դիմումը ներկայացվում է, և երկարաձգման համար տուրքը վճարվում է վեց ամսվա ընթացքում, որն ավարտվում է այն ամսվա վերջին օրը, երբ ավարտվում է պահպանության ժամկետը: Հակառակ դեպքում դիմումը կարող է ներկայացվել և տուրքը կարող է վճարվել 1-ին նախադասությունում նշված օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում՝ այդ հետագա ժամկետում լրացուցիչ տուրքը վճարելու պայմանով:
4. Գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է գրանցման գործողության ժամկետի ավարտին հաջորդող օրվանից: Գործողության ժամկետի երկարաձգումը գրանցվում է գրանցամատյանում:

Մաս 3

Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը

Հոդված 14

Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը

1. Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը պատկանում է հեղինակին կամ նրա իրավահաջորդին:
2. Եթե երկու կամ ավելի անձինք համատեղ նմուշ են ստեղծել, Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը պատկանում է նրանց համատեղ:
3. Այնուամենայնիվ, եթե արդյունաբերական նմուշն ստեղծվում է աշխատողի կողմից՝ իր պարտականությունները կամ գործատուի հանձնարարությունները կատարելիս, Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը պատկանում է գործատուին, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված համաձայնությամբ կամ ներպետական իրավունքով:

Հոդված 15

Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքին առնչվող պահանջները

1. Եթե 14-րդ հոդվածի համաձայն համապատասխան իրավունքներ չունեցող անձի կողմից բացահայտվում կամ խնդրարկվում է Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշ, կամ եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը հայտարկվել կամ գրանցվել է այդպիսի անձի անունով, ապա այդ դրույթի համաձայն նման իրավունքներ ունեցող անձը, չսահմանափակելով նրան մատչելի իրավական պաշտպանության որևէ այլ միջոցի կիրառումը, կարող է որպես Համայնքի արդյունաբերական նմուշի օրինական իրավատեր ճանաչվելու պահանջ ներկայացնել:
2. Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ համատեղ իրավունքներ ունեցող անձը կարող է, 1-ին պարբերության համաձայն, նմուշի համատեղ իրավատեր ճանաչվելու պահանջ ներկայացնել:
3. 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված դատական վարույթները չեն կարող հարուցվել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հրապարակման կամ Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի բացահայտման թվականից երեք տարի հետո: Այս դրույթը չի կիրառվում, եթե Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքներ չունեցող անձն այդ նմուշի հայտը ներկայացնելու, այն բացահայտելու կամ էլ այն իրեն փոխանցելու ժամանակ գործել է անբարեխիղճ կերպով:
4. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում գրանցամատյանում գրառվում է հետևյալը

ա) նշում այն մասին, որ 1-ին հոդվածով նախատեսված դատական վարույթները հարուցվել են.

բ) վերջնական որոշումը կամ վարույթների որևէ այլ ավարտը.

գ) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի սեփականատերերի՝ վերջնական որոշումից բխող ցանկացած փոփոխություն:

Հոդված 16

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վճիռների հետևանքները

1. Եթե հոդված 15«1»-ի համաձայն իրականացվող դատական վարույթների հետևանքով տեղի է ունենում Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ սեփականության իրավունքի ամբողջական փոխանցում, գրանցամատյանում նոր սեփականատիրոջը գրանցելուն պես՝ լիցենզիաները և այլ իրավունքները դադարում են:

2. Եթե նախքան հոդված 15«1»-ի համաձայն իրավական վարույթների հարուցումը գրանցելը, Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի սեփականատերը կամ լիցենզատուն Համայնքի տարածքում օգտագործել է նմուշը կամ լուրջ և արդյունավետ կերպով նախապատրաստվել է դրան, նա կարող է շարունակել օգտագործումը՝ պայմանով, եթե կիրարկող կանոնակարգով սահմանված ժամկետում հասարակ (ոչ բացառիկ) լիցենզիա ստանալու համար դիմի գրանցամատյանում գրանցված նոր սեփականատիրոջը: Լիցենզիան տրամադրվում է ողջամիտ ժամկետով և ողջամիտ պայմաններով:

3. 2-րդ պարբերությունը չի կիրառվում, եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի սեփականատերը կամ լիցենզատուն նմուշն օգտագործելիս կամ դրան նախապատրաստվելիս գործել է անբարեխիղճ կերպով:

Հոդված 17

Կանխավարկածը հոգուտ արդյունաբերական նմուշի գրանցված իրավատիրոջ

Անձը, ում անունով գրանցված է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կամ, նախքան գրանցումը, այն անձը, որի անունով ներկայացվել է հայտը, Գրասենյակում իրականացվող կամ որևէ այլ վարույթում համարվում է համապատասխան իրավունքներ ունեցող անձ:

Հոդված 18

Որպես հեղինակ նշվելու իրավունքը

Դիզայները, ինչպես և Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն կամ սեփականատերը, իրավունք ունեն նշվելու որպես այդպիսին Գրասենյակում և գրանցամատյանում: Եթե նմուշը խմբային աշխատանքի արդյունք է, անհատ հեղինակներին նշելու փոխարեն կարող է նշվել խումբը:

Մաս 4

Համայնքի արդյունաբերական նմուշի գործողությունը

Հոդված 19

Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքները

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով դրա իրավատիրոջը՝ նմուշն օգտագործելու և երրորդ անձի կողմից առանց իրավատիրոջ համաձայնության դրա օգտագործումը թույլ չտալու բացառիկ իրավունք է վերապահվում: Վերը նշված օգտագործումն ընդգրկում է, մասնավորապես, արդյունաբերական նմուշը ներառող կամ կիրառող արտադրանքի պատրաստումը, առաջարկը, շուկայահանումը, ներմուծումը, արտահանումը կամ օգտագործումը, ինչպես նաև այդ նպատակներով արտադրանքի պահեստավորումը:

2. Այնուամենայնիվ, Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշով դրա իրավատիրոջը՝ 1-ին պարբերությունում նշված գործողությունները կանխելու իրավունք է վերապահվում, միայն եթե վիճարկվող օգտագործումը պահպանվող արդյունաբերական նմուշի կրկնօրինակման արդյունք է:

Վիճարկվող օգտագործումը չի համարվում պահպանվող արդյունաբերական նմուշի կրկնօրինակման արդյունք, եթե այն որևէ հեղինակի անկախ ստեղծագործական աշխատանքի արդյունքն է, ով, կարելի է ողջամտորեն ենթադրել, ծանոթ չի եղել իրավատիրոջ կողմից հանրամատչելի դարձված նմուշին:

3. 2-րդ պարբերությունը կիրառվում է նաև Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ, որի հրապարակումը ենթակա է հետաձգման, քանի դեռ գրանցամատյանի համապատասխան գրառումները և գործը հանրամատչելի չեն դարձել հոդված 50«4»-ի համաձայն:

Հոդված 20

Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքների սահմանափակումը

1. Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքները չեն իրականացվում՝

ա) մասնավոր և ոչ առևտրային նպատակներով իրականացվող գործողությունների նկատմամբ.

բ) փորձարարական նպատակներով իրականացվող գործողությունների նկատմամբ.

գ) մեջբերումներ անելու կամ ուսուցման նպատակով արդյունաբերական նմուշի վերարտադրման գործողությունների նկատմամբ՝ պայմանով, որ նման գործողությունները համատեղելի լինեն բարեխիղճ առևտրային փորձի հետ, և նշվի աղբյուրը, ինչպես նաև անօրինական կերպով չխոչընդոտեն նմուշի բնականոն օգտագործումը:

2. Բացի այդ, Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքները չեն իրականացվում՝

ա) երրորդ երկրում գրանցված և ժամանակավորապես Համայնքի տարածք մուտք գործած նավերի վրա և օդանավերում գտնվող սարքավորումների նկատմամբ, բ) այդ փոխադրամիջոցները վերանորոգելու նպատակով Համայնքի տարածքում պահեստամասերի և պարագաների ներմուծման նկատմամբ.

գ) այդ փոխադրամիջոցների վերանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ:

Հոդված 21

Իրավունքների դադարումը

Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքները չեն տարածվում այն արտադրանքին առնչվող գործողությունների վրա, որը ներառում կամ որում կիրառվում է Համայնքի արդյունաբերական նմուշով պահպանվող որևէ նմուշ, եթե այդ արտադրանքը Համայնքում շուկայահանվել է Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ:

Հոդված 22

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ՝ այն նախապես օգտագործելուց բխող իրավունքները

1. Ցանկացած երրորդ անձ, որը կարող է հաստատել, որ նախքան հայտը ներկայացնելը կամ, եթե առաջնություն է խնդրարկվում, նախքան առաջնության թվականը, Համայնքի ներսում սկսել է բարեխիղճ կերպով օգտագործել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով պահպանվող և դրա կրկնօրինակը չհանդիսացող որևէ նմուշ կամ այդ նպատակով կատարել է լուրջ և արդյունավետ նախապատրաստական աշխատանքներ, օժտված է այն նախապես օգտագործելուց բխող իրավունքներով:

2. Նախապես օգտագործելուց բխող իրավունքը երրորդ անձին տալիս է արդյունաբերական նմուշն այն նպատակով օգտագործելու իրավունք, որի համար դրա օգտագործումը նախաձեռնվել էր կամ որի համար կատարվել էին լուրջ և արդյունավետ նախապատրաստական աշխատանքներ նախքան Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելու կամ նմուշի առաջնության թվականը:

3. Նախապես օգտագործելուց բխող իրավունքը չի ենթադրում մեկ այլ անձի՝ արդյունաբերական նմուշի օգտագործման թույլտվություն (լիցենզիա) տալու իրավունք:

4. Նախապես օգտագործելուց բխող իրավունքը չի կարող փոխանցվել, բացառությամբ եթե երրորդ անձը ձեռնարկություն է, ձեռնարկատիրական գործունեության այն մասի հետ մեկտեղ, որի ընթացքում իրականացվել է գործողությունը կամ կատարվել են նախապատրաստական աշխատանքները:

Հոդված 23

Օգտագործումը կառավարության կողմից

Անդամ պետության իրավունքի ցանկացած դրույթ, որը թույլ է տալիս ազգային արդյունաբերական նմուշի օգտագործումը կառավարության կողմից կամ դրա նպատակներով կարող է կիրառվել Համայնքի արդյունաբերական նմուշների նկատմամբ այնքանով, որքանով այդ օգտագործումն անհրաժեշտ է պաշտպանության կամ անվտանգության առաջնային կարիքների համար:

Մաս 5

Անվավերությունը

Հոդված 24

Անվավեր ճանաչելը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր է ճանաչվում Գրասենյակ ներկայացված դիմումի հիման վրա՝ VI և VII բաժնով սահմանված կարգով կամ Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանի կողմից՝ ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա:
2. Համայնքի արդյունաբերական նմուշը կարող է անվավեր ճանաչվել նույնիսկ ուժը կորցնելուց կամ այն զիջելուց հետո:
3. Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշն անվավեր է ճանաչվում Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանի կողմից՝ նման դատարան ներկայացված դիմումի կամ ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա:

Հոդված 25

Անվավերության հիմքերը

1. Համայնքի արդյունաբերական նմուշը կարող է անվավեր ճանաչվել միայն հետևյալ դեպքերում՝
 - ա) եթե արդյունաբերական նմուշը չի համապատասխանում հոդված 3«ա»-ում տրված սահմանմանը.
 - բ) եթե այն չի բավարարում 4–9–րդ հոդվածների պահանջները.
 - գ) եթե դատարանի որոշման ուժով իրավատերը, 14–րդ հոդվածի համաձայն, Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքներ չունի.

դ) եթե հակասություններ կան Համայնքի արդյունաբերական նմուշի և ավելի վաղ առաջնությամբ այն նմուշի միջև, որը հանրամատչելի է դարձել հայտը ներկայացնելու օրվանից հետո, կամ եթե առաջնություն է խնդրարկվում, Համայնքի արդյունաբերական նմուշի առաջնության թվականից հետո, և որը, նշված թվականից ավելի վաղ թվականից սկսած, պահպանվում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով, նման նմուշի հայտով, անդամ պետությունում արդյունաբերական նմուշի նկատմամբ գրանցված իրավունքով կամ նման իրավունքի ձեռքբերման հայտով.

ե) եթե ավելի ուշ ստեղծված արդյունաբերական նմուշում օգտագործվում է տարբերակիչ նշան, և Համայնքի իրավունքը կամ անդամ պետության՝ այդ նշանի նկատմամբ կիրառվող իրավունքը նշանի իրավաստիրոջը նման օգտագործումն արգելելու իրավունք է վերապահում.

զ) եթե արդյունաբերական նմուշն իրենից ներկայացնում է անդամ պետության հեղինակային իրավունքների մասին իրավունքով պահպանվող ստեղծագործության ոչ իրավաչափ օգտագործում.

է) եթե արդյունաբերական նմուշն իրենից ներկայացնում է «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզի կոնվենցիայի, այսուհետ՝ «Փարիզի կոնվենցիա», 6-եր հոդվածում թվարկված իրերի կամ անդամ պետությունում հանրության համար առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող և այդ հոդվածում նշվածներից բացի այլ հավատարմաքարտերի, խորհրդանիշների և զինանշանի պատկերաքանդակների ոչ իրավաչափ օգտագործում:

2. Պարբերություն 1«զ»-ով նախատեսված հիմքերը կարող են վկայակոչվել միայն այն անձի կողմից, որը, 14-րդ հոդվածի համաձայն, իրավունքներ ունի Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ:

3. Պարբերություն 1«դ»-ով, «ե»-ով և «զ»-ով նախատեսված հիմքերը կարող են վկայակոչվել միայն ավելի վաղ ծագած իրավունքի իրավաստիրոջ կամ հայտատուի կողմից:

4. Պարբերություն 1«ե»-ով նախատեսված հիմքերը կարող է վկայակոչել միայն այն անձը կամ սուբյեկտը, որի շահերը շոշափում է այդ օգտագործումը:

5. 3-րդ և 4-րդ պարբերությունները չեն սահմանափակում անդամ պետությունների ազատությունը՝ նախատեսելու, որ պարբերություն 1«դ»-ում և «ե»-ում նշված հիմքերը կարող է սեփական նախաձեռնությամբ վկայակոչել նաև տվյալ անդամ պետության համապատասխան մարմինը:

6. Պարբերություն 1«բ»-ի, «ե»-ի, «զ»-ի կամ «է»-ի համաձայն անվավեր ճանաչված Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կարող է պահպանվել փոփոխված ձևով, եթե այդ ձևով այն համապատասխանում է պահպանության պահանջներին, և նմուշի նույնականությունը պահպանվում է: Փոփոխված ձևով «պահպանումը»-ը կարող է ներառել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի իրավաստիրոջ կողմից մասնակի հրաժարմամբ ուղեկցվող գրանցումը կամ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի մասնակի անվավերության մասին դատարանի կամ Գրասենյակի որոշումը գրանցամատյանում գրանցելը:

Հոդված 26

Անվավերության հետևանքները

1. Համարվում է, որ Համայնքի արդյունաբերական նմուշն ի սկզբանե չի ունեցել սույն Կանոնակարգով սահմանված իրավական հետևանքները, եթե այն անվավեր է ճանաչվել:

2. Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատիրոջ անզգուշության կամ անբարեխիղճ գործելակերպի հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման պահանջների կամ անհիմն հարստացման վերաբերյալ ներպետական դրույթների պահպանմամբ՝ Համայնքի արդյունաբերական նմուշի անվավերության հետադարձ ուժը չի տարածվում՝

ա) ապօրինի օգտագործման վերաբերյալ ցանկացած որոշման վրա, որը վերջնական որոշման ուժ է ստացել և կատարվել մինչև անվավերության մասին որոշման կայացումը.

բ) անվավերության մասին որոշման կայացումից առաջ կնքված ցանկացած պայմանագրի վրա, եթե այն կատարվել է մինչև այդ որոշման կայացումը. այնուամենայնիվ, արդարության հիմքով կարող է պահանջվել համապատասխան պայմանագրի համաձայն վճարված գումարների վերադարձ այնքանով, որքանով արդարացված է առկա հանգամանքներով:

ԲԱԺԻՆ III

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Հոդված 27

Համայնքի արդյունաբերական նմուշների դիտարկումը որպես ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքներ

1. Եթե 28–րդ, 29–րդ, 30–րդ, 31–րդ և 32–րդ հոդվածներով այլ բան նախատեսված չէ, Համայնքի արդյունաբերական նմուշը որպես սեփականության օբյեկտ ամբողջությամբ և Համայնքի ողջ տարածքի համար դիտարկվում է որպես այն անդամ պետության ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունք, որտեղ՝

ա) իրավատիրոջ կառավարման կամ բնակության (գտնվելու) վայրն է տվյալ օրվա դրությամբ կամ

բ) իրավատիրոջ տնտեսական գործունեության իրականացման վայրն է տվյալ օրվա դրությամբ, եթե «ա» կետը չի կիրառվում:

2. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում 1–ին պարբերությունը կիրառվում է գրանցամատյանի գրառումներին համապատասխան:

3. Համատեղ իրավատերերի դեպքում, եթե նրանցից երկուսը կամ մի քանիսը բավարարում են 1–ին պարբերությամբ նախատեսված պայմանը, այդ պարբերությունում նշված անդամ պետությունը որոշվում է՝

ա) Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ նրանց կողմից ընդհանուր համաձայնությամբ նշանակված համապատասխան համատեղ իրավատիրոջը հղում կատարելով:

բ) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում՝ հղում կատարելով համապատասխան համատեղ իրավատերերից առաջինին՝ այն հերթականությամբ, որով նրանք նշված են գրանցամատյանում:

4. Եթե 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները չեն կիրառվում, 1-ին պարբերությունում նշված անդամ պետությունը Գրասենյակի նստավայրի անդամ պետությունն է:

Հոդված 28

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի փոխանցումը

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի փոխանցումը կատարվում է հետևյալ դրույթների պահպանմամբ՝

ա) կողմերից մեկի պահանջով փոխանցումը գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

բ) իրավահաջորդը չի կարող իրականացնել Համայնքի արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքները, քանի դեռ փոխանցումը չի գրանցվել գրանցամատյանում:

գ) եթե Գրասենյակին առնչվող հարցերում անհրաժեշտ է պահպանել ժամկետներ, իրավահաջորդը կարող է համապատասխան փաստաթղթերը Գրասենյակ ներկայացնել վերջինիս կողմից փոխանցումը գրանցելու մասին դիմումն ստանալուց հետո:

դ) բոլոր այն փաստաթղթերը, որոնք 66-րդ հոդվածի ուժով պահանջում են ծանուցում Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի իրավատիրոջը, Գրասենյակի կողմից հասցեագրվում են որպես իրավատեր գրանցված անձին կամ նրա ներկայացուցչին, եթե նման ներկայացուցիչ նշանակվել է:

Հոդված 29

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ գույքային իրավունքները

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կարող է տրամադրվել որպես պարտավորությունների ապահովման միջոց կամ լինել գույքային իրավունքի օբյեկտ:

2. Կողմերից մեկի պահանջով՝ 1-ին պարբերությունում նշված իրավունքները գրանցվում են գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 30

Բռնագանձում տարածելը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի վրա կարող է բռնագանձում տարածվել:
2. Ինչ վերաբերում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի վրա բռնագանձում տարածելու կարգին, ապա բացառիկ իրավասությամբ օժտված են 27-րդ հոդվածի համաձայն որոշված անդամ պետության դատարանները և մարմինները:
3. Կողմերից մեկի պահանջով՝ բռնագանձում տարածելը գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 31

Սնանկության վարույթները

1. Համայնքի արդյունաբերական նմուշը կարող է ներառվել միայն պարտապանի հիմնական շահերի կենտրոնի գտնվելու վայրի անդամ պետությունում հարուցված սնանկության վարույթներում:
2. Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ համատեղ սեփականության դեպքում 1-ին պարբերությունը կիրառվում է համատեղ սեփականատիրոջ մասնաբաժնի նկատմամբ:
3. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշը ներառված է սնանկության վարույթներում, իրավասու ներպետական մարմնի պահանջով այդ մասին գրառում է կատարվում գրանցամատյանում և հրապարակվում է հոդված 73«1»-ում նշված Համայնքի արդյունաբերական նմուշների տեղեկագրում:

Հոդված 32

Լիցենզավորումը

1. Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատերը կարող է լիցենզիայի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը ամբողջ Համայնքում կամ դրա մի մասում: Լիցենզիան կարող է լինել բացառիկ կամ հասարակ (ոչ բացառիկ):
2. Չհակասելով պայմանագրային իրավունքի հիման վրա իրականացվող դատավարություններին՝ սեփականատերը կարող է Համայնքի արդյունաբերական նմուշով վերապահվող իրավունքներն իրականացնել այն լիցենզատուի դեմ, որը խախտում է իր լիցենզային պայմանագրի որևէ դրույթ, որը վերաբերում է դրա գործողության ժամկետին, նմուշի օգտագործման ձևին, արտադրանքների այն շրջանակին, որոնց համար տրվել է լիցենզիան, և լիցենզատուի պատրաստած արտադրանքի որակին:
3. Չսահմանափակելով լիցենզային պայմանագրի դրույթների կիրառումը՝ լիցենզատուն կարող է Համայնքի արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթ հարուցել միայն իրավատիրոջ համաձայնությամբ: Այնուամենայնիվ, բացառիկ լիցենզիայի

սեփականատերը կարող է նման վարույթ հարուցել, եթե արդյունաբերական նմուշի իրավատերը, դա անելու մասին ծանուցում ստանալով, համապատասխան ժամկետում նմուշի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթ չի հարուցում:

4. Լիցենզառուն իրեն հասցված վնասի փոխհատուցում ստանալու նպատակով իրավունք ունի միջամտելու նմուշի ապօրինի օգտագործման վերաբերյալ Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատիրոջ կողմից հարուցված հայցին:

5. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում, այդպիսի իրավունքի վերաբերյալ լիցենզիայի տրամադրումը կամ փոխանցումը կողմերից մեկի պահանջով գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 33

Գործողությունը երրորդ անձանց նկատմամբ

1. Երրորդ անձանց համար 28–րդ, 29–րդ, 30–րդ և 32–րդ հոդվածներում նշված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների իրավական հետևանքները կարգավորվում են 27–րդ հոդվածի համաձայն որոշված անդամ պետության իրավունքով:

2. Այնուամենայնիվ, Համայնքի արդյունաբերական նմուշների առումով 28–րդ, 29–րդ և 32–րդ հոդվածներում նշված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունները բոլոր անդամ պետություններում երրորդ անձանց համար հետևանքներ են առաջացնում միայն գրանցամատյանում դրանք գրանցելուց հետո: Այնուամենայնիվ, նախքան գրանցումը ցանկացած նման գործողություն հետևանքներ է առաջացնում այն երրորդ անձանց համար, որոնք Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները ձեռք են բերել այդ գործողության կատարման օրվանից հետո, սակայն, որոնք այդ իրավունքները ձեռք բերելու օրվա դրությամբ իմացել են այդ գործողության մասին:

3. 2–րդ պարբերությունը չի կիրառվում այն անձի նկատմամբ, ով Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կամ դրա հետ կապված իրավունքը ձեռք է բերում պարտավորությունն ամբողջությամբ փոխանցելու կամ որևէ այլ համապարփակ իրավահաջորդության միջոցով:

4. Մինչև անվճարունակության յլորտում անդամ պետությունների ընդհանուր կանոններն ուժի մեջ մտնեն, երրորդ անձանց համար սնանկության վարույթների իրավական հետևանքները կարգավորվում են այն անդամ պետության իրավունքով, որտեղ նման վարույթներ առաջինն են հարուցվում՝ ներպետական իրավունքի կամ այդ յլորտում կիրառվող կանոնակարգերի դրույթների իմաստով:

Հոդված 34

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի՝ որպես սեփականության օբյեկտի համար ներկայացված հայտը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի՝ որպես սեփականության օբյեկտի համար ներկայացված հայտն ամբողջությամբ և Համայնքի ողջ տարածքի համար դիտարկվում է որպես

27-րդ հոդվածին համապատասխան որոշված անդամ պետության ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունք:

2. 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածները համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում են Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերի նկատմամբ: Եթե այդ դրույթներից մեկի գործողությունը պայմանավորված է գրանցամատյանում կատարված որևէ գրառումով, այդ ձևականությունն իրականացվում է արդյունքում գրանցվելիք Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը գրանցելիս:

ԲԱԺԻՆ IV

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՅՏԸ

Մաս 1

Հայտերը ներկայացնելը և դրանք կարգավորող պայմանները

Հոդված 35

Հայտերը ներկայացնելը և ուղարկելը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը հայտատուի ընտրությամբ ներկայացվում է՝

ա) Գրասենյակ.

բ) անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ կամ

գ) Բենիլյուքսի երկրներում՝ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակ:

2. Եթե հայտը ներկայացվում է անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ կամ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակ, այդ գրասենյակը ձեռնարկում է բոլոր քայլերը՝ հայտը ներկայացնելուց հետո երկու շաբաթվա ընթացքում այն Գրասենյակ ուղարկելու համար: Այն կարող է հայտատուից գանձել տուրք, որը չի գերազանցում հայտը ստանալու և Գրասենյակ ուղարկելու վարչական ծախսերի չափը:

3. Անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակի կամ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակի կողմից ուղարկված հայտն ստանալուց անմիջապես հետո Գրասենյակն այդ մասին տեղեկացնում է հայտատուին՝ նշելով Գրասենյակի կողմից հայտը ստանալու օրը:

4. Մույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 10 տարվա ընթացքում Հանձնաժողովը կազմում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերը ներկայացնելու համակարգի գործունեության մասին զեկույց՝ դրան կցելով վերանայման որևէ առաջարկ, որն անհրաժեշտ է համարում:

Հոդված 36

Պայմաններ, որոնց պետք է համապատասխանեն հայտերը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը պետք է պարունակի՝

ա) գրանցման մասին դիմում.

բ) հայտատուին նույնականացնող տեղեկություններ.

գ) արդյունաբերական նմուշի՝ վերարտադրման համար հարմար պատկեր: Այնուամենայնիվ, եթե հայտի առարկան երկչափ արդյունաբերական նմուշ է, և հայտը պարունակում է 50-րդ հոդվածի համաձայն հրապարակումը հետաձգելու մասին դիմում, արդյունաբերական նմուշի պատկերը կարող է փոխարինվել նմուշի օրինակով:

2. Հայտը պետք է նաև պարունակի նշում այն արտադրանքների մասին, որոնցում նախատեսվում է ներառել կամ կիրառել արդյունաբերական նմուշը:

3. Ի լրումն, հայտը կարող է պարունակել՝

ա) պատկերը կամ նմուշի օրինակը մեկնաբանող նկարագրություն.

բ) 50-րդ հոդվածի համաձայն գրանցման հրապարակումը հետաձգելու մասին դիմում.

գ) հայտատուի ներկայացուցչին նույնականացնող տեղեկություններ, եթե հայտատուն նշանակել է նման ներկայացուցիչ.

դ) այն արտադրանքների դասակարգումը, որոնցում արդյունաբերական նմուշը նախատեսվում է ներառել կամ կիրառել դասին համապատասխան.

ե) հղում հեղինակին կամ հեղինակների խմբին, կամ էլ հայտատուի պատասխանատվությամբ հայտարարություն այն մասին, որ հեղինակը կամ հեղինակների խումբը հրաժարվել է իրեն հղում կատարելու իրավունքից:

4. Հայտի համար վճարվում է գրանցման և հրապարակման համար տուրք: Պարբերություն 3«բ»-ի համաձայն հրապարակումը հետաձգելու մասին դիմում ներկայացնելու դեպքում հրապարակման համար տուրքը փոխարինվում է հրապարակումը հետաձգելու համար տուրքով:

5. Հայտը պետք է համապատասխանի Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմաններին.

6. 2-րդ պարբերությունում, ինչպես նաև պարբերություն 3«ա»-ում և «դ»-ում նշված տարբերում պարունակվող տեղեկությունները չեն շոշափում արդյունաբերական նմուշի պահպանության շրջանակը՝ որպես այդպիսին:

Հոդված 37

Մի քանի նմուշների համար ներկայացվող հայտերը

1. Մի քանի արդյունաբերական նմուշներ կարող են միավորվել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների մեկ հայտում: Բացառությամբ զարդանախշերի, այս հնարավորությունն առկա է՝ պայմանով, որ բոլոր այն արտադրանքները, որոնցում նախատեսվում է ներառել կամ կիրառել արդյունաբերական նմուշները, պատկանում են Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման միևնույն դասին:
2. Հոդված 36«4»-ում նշված տուրքերից բացի՝ մի քանի նմուշների համար ներկայացվող հայտի համար վճարվում է նաև գրանցման և հրապարակման համար լրացուցիչ տուրք: Եթե մի քանի նմուշների համար ներկայացվող հայտը պարունակում է հրապարակումը հետաձգելու մասին դիմում, հրապարակման համար լրացուցիչ տուրքը փոխարինվում է հրապարակումը հետաձգելու համար լրացուցիչ տուրքով: Լրացուցիչ տուրքերը համապատասխանում են յուրաքանչյուր լրացուցիչ արդյունաբերական նմուշի համար նախատեսված հիմնական տուրքերի որոշակի տոկոսի:
3. Մի քանի նմուշների համար ներկայացվող հայտը պետք է բավարարի կիրարկող կանոնակարգով սահմանված ներկայացնելու պայմանները:
4. Մի քանի նմուշների համար ներկայացվող հայտում կամ կատարված գրանցման մեջ պարունակվող արդյունաբերական նմուշներից յուրաքանչյուրը կարող է դիտարկվել մյուսներից առանձին՝ սույն Կանոնակարգի կիրառման նպատակով: Այն կարող է, մասնավորապես, կիրարկվել, լինել լիցենզավորման առարկա, գույքային իրավունքի օբյեկտ, սնանկության վարույթների առարկա, զիջվել, փոխանցվել, անվավեր ճանաչվել, դրա վրա կարող է բռնագանձում տարածվել, դրա գործողության ժամկետը՝ երկարաձգվել, հրապարակումը՝ հետաձգվել մյուսներից առանձին: Մի քանի նմուշների համար ներկայացվող հայտը կամ կատարված գրանցումը կարող է բաժանվել առանձին հայտերի կամ գրանցումների միայն կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն:

Հոդված 38

Հայտը ներկայացնելու թվականը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելու թվականն այն օրն է, երբ հոդված 36«1»-ում նշված տեղեկությունները պարունակող փաստաթղթերը հայտատուի կողմից ներկայացվում են Գրասենյակ կամ, եթե հայտը ներկայացվել է անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ կամ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակ՝ համապատասխան գրասենյակ ներկայացնելու օրը:
2. 1-ին պարբերությունից շեղման կարգով՝ անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ կամ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակ ներկայացված այն հայտը ներկայացնելու թվականը, որը Գրասենյակ է հասնում հոդված 36«1»-ում նշված տեղեկությունները պարունակող փաստաթղթերը ներկայացնելուց ավելի քան երկու ամիս հետո, Գրասենյակի կողմից նման փաստաթղթերի ստացման օրն է:

Հոդված 39

Համայնքի արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելուն հավասարեցված ներպետական ներկայացումը

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը, որը ներկայացնելու թվականը սահմանվել է, անդամ պետությունում հավասարեցվում է սահմանված կարգով ներպետական ներկայացմանը՝ անհրաժեշտության դեպքում ներառյալ նշված հայտի համար խնդրարկվող առաջնությունը:

Հոդված 40

Դասակարգումը

Սույն Կանոնակարգի նպատակով օգտագործվում է 1968 թվականի հոկտեմբերի 8-ին Լոկառնոյում ստորագրված Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգում սահմանող համաձայնագրի հավելվածը:

Մաս 2

Առաջնությունը

Հոդված 41

Առաջնության իրավունքը

1. Այն անձին, որը պատշաճ կերպով արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի կամ օգտակար մոդելի հայտ է ներկայացրել «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզի կոնվենցիայի կամ «Առևտրի միջազգային կազմակերպության հիմնադրման մասին» համաձայնագրի մասնակից պետությունում կամ այդ պետությունում պահպանության համար, կամ նրա իրավահաջորդներին միևնույն արդյունաբերական նմուշի կամ օգտակար մոդելի համար Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտ ներկայացնելու նպատակով տրվում է առաջնության իրավունք՝ առաջին հայտը ներկայացնելու թվականից սկսած վեց ամիս ժամկետով:

2. Հայտի յուրաքանչյուր ներկայացում, որը համարժեք է սահմանված կարգով ներպետական ներկայացմանը դրա ներկայացման վայրի պետության ներպետական իրավունքի կամ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի համաձայն, ճանաչվում է որպես առաջնության իրավունքի ծագման հիմք:

3. «Սահմանված կարգով ներպետական ներկայացում» նշանակում է ցանկացած ներկայացում, որը բավարար է հայտը ներկայացնելու թվականը սահմանելու համար՝ անկախ հայտի արդյունքից:

4. Նախորդ առաջին հայտի առարկա հանդիսացող արդյունաբերական նմուշի՝ միևնույն անդամ պետությունում կամ այդ պետությունում պահպանության համար հաջորդ հայտը առաջնության սահմանման նպատակով համարվում է առաջին հայտ՝ պայմանով, որ հաջորդ հայտը

ներկայացնելու թվականին նախորդ հայտը, առանց հանրության կողմից ուսումնասիրման համար մատչելի դառնալու և բոլոր իրավունքների դադարեցմամբ, հետ է կանչվել, մերժվել է, կամ դրանից հրաժարվել են, և այն հիմք չի ծառայել առաջնության խնդրարկման համար:

Նախորդ հայտն այդուհետ չի կարող ծառայել որպես առաջնության իրավունքի խնդրարկման հիմք:

5. Եթե հայտը ներկայացվել է այն պետությունում, որը Փարիզի կոնվենցիայի կամ «Առևտրի միջազգային կազմակերպության հիմնադրման մասին» համաձայնագրի մասնակից չէ, 1-4-րդ պարբերությունները կիրառվում են միայն այնքանով, որքանով այդ պետությունը, հրապարակված տվյալների համաձայն, Գրասենյակ հայտ ներկայացնելու հիման վրա և սույն Կանոնակարգով սահմանված պայմանների համարժեք պայմանների պահպանմամբ, շնորհում է հավասարազոր առաջնության իրավունք:

Հոդված 42

Առաջնության խնդրարկումը

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն, որը ցանկանում է օգտվել նախորդ հայտի առաջնությունից, ներկայացնում է առաջնության մասին հայտարարություն և նախորդ հայտի պատճենը: Եթե վերջինս կազմված չէ Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից որևէ մեկով, Գրասենյակը կարող է պահանջել նախորդ հայտի թարգմանությունն այդ լեզուներից որևէ մեկով:

Հոդված 43

Առաջնության իրավունքի ազդեցությունը

Առաջնության իրավունքի ուժով Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելու թվական է համարվում առաջնության թվականը՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 22-րդ հոդվածների և հոդված 25«1»«դ»-ի ու 50«1»-ի նպատակով:

Հոդված 44

Ցուցահանդեսային առաջնությունը

1. Եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն 1928 թվականի նոյեմբերի 22-ին Փարիզում ստորագրված և վերջին անգամ 1972 թվականի նոյեմբերի 30-ին վերանայված՝ «Միջազգային ցուցահանդեսների մասին» կոնվենցիայի պայմանների շրջանակներում անցկացվող պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսի ժամանակ բացահայտել է արտադրանքներ, որոնք ներառում կամ որոնցում կիրառվում է այդ նմուշը, ապա կարող է, այդպիսի արտադրանքների առաջին բացահայտման թվականից հետո վեց ամսվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում, խնդրարկել 43-րդ հոդվածի իմաստով առաջնության իրավունք՝ այդ թվականից սկսած:

2. Հայտատուն, որը ցանկանում է 1-ին պարբերության, ինչպես նաև կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն առաջնության իրավունք խնդրարկել, պետք է ապացույց

ներկայացնի, որ նա ցուցահանդեսի ժամանակ բացահայտել է այն արտադրանքները, որոնք ներառում կամ որոնցում կիրառվում է այդ արդյունաբերական նմուշը:

3. Անդամ պետությունում կամ երրորդ երկրում շնորհված ցուցահանդեսային առաջնությամբ 41-րդ հոդվածով սահմանված առաջնության ժամկետը չի երկարաձգվում:

ԲԱԺԻՆ V

ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 45

Հայտը ներկայացնելու ձևական պահանջների հետ կապված փորձաքննությունը

1. Հայտը ներկայացնելու թվականը սահմանելու նպատակով Գրասենյակն ստուգում է, թե արդյոք հայտը բավարարում է հոդված 36«1»-ով սահմանված պահանջները:

2. Գրասենյակը ստուգում է, թե արդյոք՝

ա) հայտը բավարարում է հոդվածներ 36«2»-ով, 36«3»-ով, 36«4»-ով և 36«5»-ով, իսկ մի քանի նմուշների համար ներկայացվող հայտի դեպքում՝ հոդվածներ 37«1»-ով և 37«2»-ով սահմանված այլ պահանջները:

բ) հայտը բավարարում է 36-րդ և 37-րդ հոդվածները կիրարկելու նպատակով կիրարկող կանոնակարգով սահմանված ձևական պահանջները:

գ) հոդված 77«2»-ի պահանջները բավարարված են:

դ) բավարարված են առաջնության խնդրարկման վերաբերյալ պահանջները, եթե առաջնություն խնդրարկվում է:

3. Հայտը ներկայացնելու ձևական պահանջների հետ կապված փորձաքննության պայմանները սահմանվում են կիրարկող կանոնակարգով:

Հոդված 46

Թերությունները, որոնք հնարավոր է վերացնել

1. Եթե 45-րդ հոդվածի համաձայն փորձաքննություն իրականացնելիս Գրասենյակը նկատում է, որ կան թերություններ, որոնք հնարավոր է վերացնել, Գրասենյակը հայտատուից պահանջում է սահմանված ժամկետում վերացնել դրանք:

2. Եթե թերությունները վերաբերում են հոդված 36«1»-ում նշված պահանջներին, և եթե հայտատուն սահմանված ժամկետում կատարում է Գրասենյակի պահանջը, Գրասենյակը որպես հայտը ներկայացնելու թվական է սահմանում թերությունները վերացնելու օրը: Եթե թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, հայտը չի դիտարկվում որպես Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտ:

3. Եթե թերությունները վերաբերում են հոդվածներ 45«2»«ա»-ում, «բ»-ում և «գ»-ում նշված պահանջներին՝ ներառյալ տուրքերի վճարումը, և եթե հայտատուն սահմանված ժամկետում կատարում է Գրասենյակի պահանջը, Գրասենյակը որպես հայտը ներկայացնելու թվական է սահմանում հայտի սկզբնական ներկայացման թվականը: Եթե թերությունները չեն վերացվում կամ վճարումները չեն կատարվում սահմանված ժամկետում, Գրասենյակը մերժում է հայտը:

4. Եթե թերությունները վերաբերում են հոդված 45«2»«դ»-ում նշված պահանջներին, սահմանված ժամկետում դրանք չվերացնելը հանգեցնում է հայտի առաջնության իրավունքի կորստին:

Հոդված 47

Գրանցման անհնարիության հիմքերը

1. Եթե Գրասենյակը 45-րդ հոդվածի համաձայն փորձաքննությունն իրականացնելիս նկատում է, որ այն արդյունաբերական նմուշը, որի համար պահպանություն է խնդրարկվում՝

ա) չի համապատասխանում հոդված 3«ա»-ում տրված սահմանմանը կամ

բ) հակասում է հանրային կարգին, կամ բարոյականության ընդունված սկզբունքներին, այն մերժում է հայտը:

2. Հայտը չի կարող մերժվել, քանի դեռ հայտատուին իր հայտը հետ կանչելու, հայտում փոփոխություններ կատարելու կամ իր դիտողությունները ներկայացնելու հնարավորություն չի ընձեռվել:

Հոդված 48

Գրանցումը

Եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտին ներկայացված պահանջները բավարարվել են, և եթե հայտը 47-րդ հոդվածի ուժով չի մերժվել, Գրասենյակը Համայնքի արդյունաբերական նմուշների գրանցամատյանում հայտը գրանցում է որպես Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշ: Գրանցումը թվագրվում է 38-րդ հոդվածում նշված՝ հայտը ներկայացնելու թվականով:

Հոդված 49

Հրապարակումը

Գրանցումից հետո Գրասենյակը Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը հրապարակում է հոդված 73«1»-ում նշված Համայնքի արդյունաբերական նմուշների տեղեկագրում: Հրապարակման բովանդակությունը սահմանվում է կիրարկող կանոնակարգով:

Հոդված 50

Հրապարակման հետաձգումը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն կարող է հայտը ներկայացնելիս Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հրապարակումը հայտը ներկայացնելու թվականից կամ, եթե առաջնություն է խնդրարկվում՝ առաջնության թվականից սկսած 30 ամիս ժամկետով հետաձգելու մասին դիմում ներկայացնել:

2. Նման դիմումի դեպքում, եթե 48-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարված են, Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը գրանցվում է, բայց ոչ նմուշի պատկերը և ոչ էլ հայտին վերաբերող որևէ փաստաթուղթ, հոդված 74«2»-ի դրույթների պահպանմամբ, մատչելի չեն հանրության կողմից ուսումնասիրման համար:

3. Գրասենյակը Համայնքի արդյունաբերական նմուշների տեղեկագրում հրապարակում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հրապարակումը հետաձգելու մասին նշում: Նշումն ուղեկցվում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի իրավատիրոջը նույնականացնող տեղեկություններով, հայտը ներկայացնելու թվականով և կիրարկող կանոնակարգով սահմանված ցանկացած այլ մանրամասներով:

4. Հետաձգման ժամկետը լրանալուց հետո կամ, իրավունքի իրավատիրոջ պահանջով դրան նախորդող որևէ օր, Գրասենյակը գրանցամատյանի բոլոր գրառումները և հայտի վերաբերյալ գործը դարձնում է հանրության կողմից ուսումնասիրման համար մատչելի և Համայնքի արդյունաբերական նմուշների տեղեկագրում հրապարակում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը՝ պայմանով, որ կիրարկող կանոնակարգով սահմանված ժամկետում՝

ա) վճարվում է հրապարակման համար տուրքը, իսկ մի քանի նմուշների համար ներկայացվող հայտի դեպքում՝ հրապարակման համար լրացուցիչ տուրքը.

բ) իրավունքի իրավատերը Գրասենյակ է ներկայացրել արդյունաբերական նմուշի պատկերը, եթե կիրառվել է հոդված 36«1»«գ»-ով նախատեսված տարբերակը:

Եթե իրավատերը չի բավարարում այս պահանջները, համարվում է, որ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն ի սկզբանե չի ունեցել սույն Կանոնակարգով սահմանված իրավական հետևանքները:

5. Մի քանի նմուշների համար ներկայացվող հայտերի դեպքում 4-րդ պարբերությունն անհրաժեշտ է կիրառել միայն դրանում ներառված որոշ արդյունաբերական նմուշների նկատմամբ:

6. Հրապարակման հետաձգման ժամկետի ընթացքում Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հիման վրա դատական վարույթներ հարուցվում են՝ պայմանով, որ գրանցամատյանում և գործում պարունակվող տեղեկությունները հաղորդվել են այն անձին, որի դեմ հարուցվել է հայցը:

ԲԱԺԻՆ VI

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՈՂ ԶԻՋԵԼԸ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼԸ

Հոդված 51

Զիջելը

1. Իրավունքի իրավատերը Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը զիջելու մասին գրավոր հայտնում է Գրասենյակին: Այն իրավաբանական ուժ չունի, քանի դեռ չի գրանցվել գրանցամատյանում:
2. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշը, որի հրապարակումը ենթակա է հետաձգման, զիջվում է, համարվում է, որ այն ի սկզբանե չի ունեցել սույն Կանոնակարգով սահմանված իրավական հետևանքները:
3. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կարող է զիջվել մասամբ՝ պայմանով, որ դրա փոփոխված տարբերակը բավարարում է պահպանության պահանջները, և արդյունաբերական նմուշի նույնականությունը պահպանվում է:
4. Զիջումը գրանցվում է միայն գրանցամատյանում գրանցված իրավունքի իրավատիրոջ համաձայնությամբ: Եթե առկա է գրանցված լիցենզիա, ապա զիջումը գրանցվում է գրանցամատյանում, միայն եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի իրավատերն ապացուցում է, որ նմուշը զիջելու իր մտադրության մասին տեղեկացրել է լիցենզատուին: Գրանցումը կատարվում է կիրարկող կանոնակարգով սահմանված ժամկետի ավարտին:
5. Եթե 14-րդ հոդվածի համաձայն Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների վերաբերյալ հայց է ներկայացվել Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարան, Գրասենյակը, առանց հայցվորի համաձայնության, զիջումը չի գրանցում գրանցամատյանում:

Հոդված 52

Անվավեր ճանաչելու մասին դիմումը

1. Հոդված 25«2»-ի, «3»-ի, «4»-ի և «5»-ի դրույթների պահպանմամբ՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ինչպես նաև համապատասխան լիազորություններ ունեցող որևէ պետական մարմին կարող է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի գրանցումն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնել Գրասենյակ:
2. Դիմումը պետք է ներկայացվի գրավոր և լինի հիմնավորված: Այն չի համարվում ներկայացված, քանի դեռ անվավեր ճանաչելու մասին դիմումի համար նախատեսված տուրքը չի վճարվել:
3. Արդյունաբերական նմուշի գրանցումն անվավեր ճանաչելու մասին դիմումն անընդունելի է, եթե նույն առարկային ու հայցի հիմքին վերաբերող և նույն կողմերը ներառող դիմումի

վերաբերյալ որոշում է կայացվել Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանի կողմից, և այն վերջնական որոշման ուժ է ստացել:

Հոդված 53

Դիմումի քննությունը

1. Եթե Գրասենյակը գտնում է, որ անվավեր ճանաչելու մասին դիմումն ընդունելի է, Գրասենյակը ստուգում է, թե արդյոք անվավերության՝ 25-րդ հոդվածում նշված հիմքերը խոչընդոտում են Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի պահպանմանը:
2. Անվավեր ճանաչելու մասին դիմումը կիրարկող կանոնակարգի համաձայն քննելիս Գրասենյակն անհրաժեշտ հաճախականությամբ հրավիրում է կողմերին՝ իր կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու մյուս կողմերի կամ իր կողմից տրված հաղորդումների վերաբերյալ իրենց դիտողությունները:
3. Համայնքի արդյունաբերական նմուշի գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշումը վերջնական դառնալուն պես գրանցվում է գրանցամատյանում:

Հոդված 54

Արդյունաբերական նմուշը ենթադրյալ ապօրինի օգտագործողի մասնակցությունը վարույթին

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի գրանցումն անվավեր ճանաչելու մասին դիմումը ներկայացնելու դեպքում և քանի դեռ Գրասենյակի կողմից վերջնական որոշում չի կայացվել, ցանկացած երրորդ անձ, որը կարող է ապացուցել, որ իր դեմ հարուցվել է այդ նույն արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման վարույթ, կարող է որպես կողմ ընդգրկվել անվավերության վերաբերյալ վարույթում՝ ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի հարուցման օրվանից հետո 3 ամսվա ընթացքում ներկայացված դիմումի հիման վրա:

Նույնը կիրառվում է ցանկացած երրորդ անձի նկատմամբ, որն ապացուցում է, որ Համայնքի արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի իրավատերը դիմել է իրեն արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործումը դադարեցնելու պահանջով, և որ ինքը վարույթ է հարուցել, որպեսզի դատարանը իր կողմից Համայնքի արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործումը հերքող վճիռ կայացնի:

2. Որպես կողմ ընդգրկվելու մասին դիմումը պետք է ներկայացվի գրավոր և լինի հիմնավորված: Այն չի համարվում ներկայացված, քանի դեռ հոդված 52«2»-ում նշված՝ անվավեր ճանաչելու մասին դիմումի համար տուրքը չի վճարվել: Այդուհետ, այդ դիմումը, կիրարկող կանոնակարգով սահմանված բացառությունների պահպանմամբ, դիտարկվում է որպես անվավեր ճանաչելու մասին դիմում:

ԲԱԺԻՆ VII

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Հոդված 55 Բողոքարկման ենթակա որոշումները

1. Բողոքարկման ենթակա են փորձաքննություն իրականացնողների, Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների կառավարման և իրավաբանական բաժնի, ինչպես նաև Անվավեր ճանաչելու հարցերով բաժինների որոշումները: Բողոքարկումը կասեցնում է այդ որոշումների կատարումը:
2. Որոշումը, որով վարույթը չի կարճվում կողմերից մեկի մասով, կարող է բողոքարկվել միայն վերջնական որոշման հետ միասին՝ բացառությամբ, երբ այդ որոշմամբ առանձին բողոքարկման հնարավորություն է տրվում:

Հոդված 56

Բողոք բերելու և բողոքարկման վարույթի կողմ լինելու իրավունք ունեցող անձինք

Վարույթի ցանկացած կողմ, ում շահերից չի բխում որոշումը, կարող է բողոքարկել այն:
Վարույթի ցանկացած այլ կողմ բողոքարկման վարույթի կողմ է իրավունքի ուժով:

Հոդված 57

Բողոքարկման ժամկետը և կարգը

Բողոքարկման մասին ծանուցումը պետք է գրավոր Գրասենյակ ներկայացվի բողոքարկված որոշման մասին ծանուցման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում: Ծանուցումը համարվում է ներկայացված միայն բողոքարկման համար տուրքի վճարման դեպքում: Որոշման մասին ծանուցման օրվանից հետո չորս ամսվա ընթացքում պետք է ներկայացվի բողոքարկման հիմքերի գրավոր շարադրանքը:

Հոդված 58

Նախնական վերանայումը

1. Եթե վարչությունը, որի որոշումը վիճարկվում է, համարում է բողոքարկումն ընդունելի և հիմնավորված, այն փոփոխում է իր որոշումը: Սա չի կիրառվում, եթե բողոքարկողին առարկում է վարույթի մեկ այլ կողմ:
2. Եթե որոշումը չի փոփոխվում հիմքերի շարադրանքն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, բողոքն անհապաղ և առանց դրա էության վերաբերյալ մեկնաբանության ուղարկվում է Բողոքարկման խորհուրդ:

Հոդված 59

Բողոքների քննությունը

1. Եթե բողոքն ընդունելի է, Բողոքարկման խորհուրդը քննում է դրա թույլատրելիությունը:
2. Բողոքը քննելիս Բողոքարկման խորհուրդը կարող է անհրաժեշտ հաճախականությամբ կողմերին հրավիրել իր կողմից սահմանվելիք ժամկետում ներկայացնելու մյուս կողմերի կամ իր կողմից տրված հաղորդումների վերաբերյալ իրենց դիտողությունները:

Հոդված 60

Բողոքների վերաբերյալ ընդունված որոշումները

1. Բողոքի էության քննությունից հետո Բողոքարկման խորհուրդը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում: Բողոքարկման խորհուրդը կարող է բողոքարկված որոշման համար պատասխանատու վարչության իրավասությունների շրջանակներում իրականացնել ցանկացած լիազորություն կամ գործն ուղարկել այդ վարչություն լրացուցիչ քննության:
2. Եթե Բողոքարկման խորհուրդը գործը լրացուցիչ քննության է ուղարկում այն վարչություն, որի որոշումը բողոքարկվել է, վերջինս կաշկանդված է Բողոքարկման խորհրդի որոշումների պատճառաբանական մասով այնքանով, որքանով փաստերը նույնն են:
3. Բողոքարկման խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում հոդված 61 «5»-ում նշված ժամկետը լրանալու օրվանից միայն, կամ, եթե այդ ժամանակահատվածում հայց է հարուցվել Արդարադատության դատարան՝ նշված հայցի մերժման օրվանից:

Հոդված 61

Արդարադատության դատարան հարուցված հայցերը

1. Բողոքների վերաբերյալ Բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումների դեմ հայց կարող է հարուցվել Արդարադատության դատարան:
2. Հայցը կարող է հարուցվել իրավասության բացակայության, էական ընթացակարգային պահանջների խախտման, Պայմանագրի, սույն Կանոնակարգի կամ դրանց կիրառման հետ կապված իրավական ցանկացած նորմի խախտման կամ լիազորությունների չարաշահման հիմքերով:
3. Արդարադատության դատարանն իրավասու է անվավեր ճանաչել կամ փոփոխել վիճարկվող որոշումը:
4. Բողոքարկման խորհրդում իրականացվող վարույթի ցանկացած կողմ, որի շահերից չի բխում որոշումը, կարող է նման հայց հարուցել:
5. Արդարադատության դատարան հայցը հարուցվում է Բողոքարկման խորհրդի որոշման մասին ծանուցումից հետո երկու ամսվա ընթացքում:

6. Գրասենյակը ձեռնարկում է Արդարադատության դատարանի վճիռը կատարելու համար անհրաժեշտ միջոցներ:

ԲԱԺԻՆ VIII

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Մաս 1Ընդհանուր դրույթներ

Հոդված 62

Որոշումների հիմնավորումների շարադրանքը

Գրասենյակի որոշումներում շարադրվում են դրանց հիմնավորումները: Դրանք պետք է հիմնվեն միայն այն հիմքերի կամ ապացույցների վրա, որոնց վերաբերյալ համապատասխան կողմերը հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց դիտողությունները:

Հոդված 63

Փաստերի ուսումնասիրությունը Գրասենյակի կողմից սեփական նախաձեռնությամբ

1. Վարույթներում Գրասենյակը փաստերն ուսումնասիրում է սեփական նախաձեռնությամբ: Այնուամենայնիվ, անվավեր ճանաչելու վերաբերյալ վարույթում Գրասենյակի ուսումնասիրությունը սահմանափակված է միայն կողմերի ներկայացրած փաստերով, ապացույցներով և փաստարկներով, ինչպես նաև նրանց կողմից խնդրարկվող իրավական պաշտպանության միջոցով:

2. Գրասենյակը կարող է չուսումնասիրել համապատասխան կողմերի՝ ոչ ժամանակին ներկայացրած փաստերը կամ ապացույցները:

Հոդված 64

Բանավոր վարույթները

1. Գրասենյակի առաջարկությամբ կամ վարույթի ցանկացած կողմի դիմումի համաձայն իրականացվում է բանավոր վարույթ, եթե Գրասենյակը նպատակահարմար է գտնում:

2. Բանավոր վարույթները, այդ թվում՝ որոշման կայացումը հրապարակային է, քանի դեռ այն վարչությունը, որտեղ իրականացվում է վարույթը, այլ որոշում չի կայացրել այն դեպքերում, երբ հանրության ներգրավումը կարող է լուրջ և չարդարացված անհարմարություններ ստեղծել, մասնավորապես, վարույթի որևէ կողմի համար:

Հոդված 65

Ապացույցների ստացումը

1. Գրասենյակում իրականացվող ցանկացած վարույթի ժամանակ ապացույցներ ներկայացնելու և ձեռք բերելու եղանակները ներառում են՝

ա) կողմերին լսելը.

բ) տեղեկություն ստանալու հարցումը.

գ) փաստաթղթեր և առանձին ապացույցներ ներկայացնելը.

դ) վկաներին լսելը.

ե) փորձագետների եզրակացությունները.

զ) երդմամբ ուղեկցվող կամ հաստատված գրավոր հայտարարությունները կամ հայտարարության կազմման վայրի պետության իրավունքի համաձայն համանման իրավաբանական ուժ ունեցող հայտարարությունները:

2. Գրասենյակի համապատասխան վարչությունը կարող է ներկայացված ապացույցների ուսումնասիրությունը հանձնարարել իր անդամներից մեկին:

3. Եթե Գրասենյակն անհրաժեշտ է համարում, որ կողմը, վկան կամ փորձագետը ապացույց ներկայացնեն բանավոր կերպով, այն համապատասխան անձին Գրասենյակ ներկայանալու ծանուցագիր է ուղարկում:

4. Կողմերը տեղեկացվում են Գրասենյակում վկաներին կամ փորձագետներին լսելու մասին: Նրանք իրավունք ունեն ներկա գտնվել և հարցեր տալ վկային կամ փորձագետին:

Հոդված 66

Ծանուցումը

Գրասենյակը համապատասխան անձանց բնականաբար տեղեկացնում է որոշումների, ծանուցագրերի և ցանկացած ծանուցումների կամ այլ հաղորդումների մասին, որոնք ժամկետներ են ենթադրում, կամ որոնց մասին համապատասխան անձինք պետք է ծանուցվեն սույն Կանոնակարգի կամ կիրարկող կանոնակարգի այլ դրույթների համաձայն, կամ որոնց մասին ծանուցումը հանձնարարել է Գրասենյակի ղեկավարը:

Հոդված 67

Մինչև իրավունքի կորուստը եղած դրության վերականգնումը (Restitutio in integrum)

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուի, իրավատիրոջ կամ Գրասենյակում իրականացվող վարույթի ցանկացած այլ կողմի իրավունքները, որը, հանգամանքներով պահանջվող պատշաճ ուշադրություն դրսևորելով հանդերձ, ի վիճակի չէր պահպանել Գրասենյակի հետ առնչվող ժամկետը, վերականգնվում են նրա դիմումի համաձայն, եթե ժամկետը չպահպանելը սույն Կանոնակարգի դրույթների ուժով ուղղակիորեն հանգեցնում է որևէ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցից օգտվելու հնարավորության կորստի:
2. Դիմումը պետք է ներկայացվի գրավոր՝ ժամկետը չպահպանելու պատճառները վերանալուց հետո 2 ամսվա ընթացքում: Չիրականացված գործողությունը պետք է կատարվի այդ ժամկետում: Դիմումն ընդունելի է միայն չպահպանված ժամկետին անմիջապես հաջորդող մեկ տարվա ընթացքում: Եթե գրանցումը երկարաձգելու մասին դիմումը չի ներկայացվում կամ երկարաձգման համար տուրքը չի վճարվում, հոդված 13«3»-ի երկրորդ նախադասությամբ նախատեսված լրացուցիչ վեցամսյա ժամանակահատվածը հանվում է մեկ տարվա ժամկետից:
3. Դիմումի մեջ պետք է նշվեն այն հիմքերը և շարադրվեն այն փաստերը, որոնց վրա այն հիմնվում է: Այն չի համարվում ներկայացված, քանի դեռ իրավունքների վերականգման համար նախատեսված տուրքը չի վճարվել:
4. Դիմումի վերաբերյալ որոշում կայացնում է չիրականացված գործողության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող վարչությունը:
5. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում 2-րդ պարբերությունում և հոդված 41«1»-ում նշված ժամկետների նկատմամբ:
6. Եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն կամ իրավատերը վերականգնում է իր իրավունքները, նա չի կարող վկայակոչել իր իրավունքները այն երրորդ անձի նկատմամբ, որը Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտի կամ գրանցման նկատմամբ իրավունքների կորստի և այդ իրավունքների վերականգնման մասին նշումը հրապարակելու միջև ընկած ժամանակահատվածում բարեխղճորեն շուկայահանել է արտադրանքներ, որոնք ներառում կամ որոնցում կիրառվում է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության շրջանակում գտնվող որևէ արդյունաբերական նմուշ:
7. Այն երրորդ անձը, որը կարող է օգտվել 6-րդ պարբերության դրույթներից, կարող է երրորդ անձ ներգրավող վարույթ հարուցել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի իրավատիրոջ կամ հայտատուի իրավունքների վերականգման վերաբերյալ որոշման դեմ՝ այդ իրավունքների վերականգնման մասին նշումը հրապարակելուց հետո երկու ամսվա ընթացքում:
8. Սույն հոդվածի որևէ դրույթ չի սահմանափակում անդամ պետությունների իրավունքը՝ վերականգնելու սույն Կանոնակարգով նախատեսված և այդ պետության մարմինների հետ առնչվող ժամկետների առումով մինչև իրավունքի կորուստը եղած դրությունը:

Հոդված 68

Հղումն ընդհանուր սկզբունքներին

Սույն Կանոնակարգում, կիրարկող կանոնակարգում, տուրքերի մասին կանոնակարգում կամ Բողոքարկման խորհուրդների ընթացակարգային կանոններում ընթացակարգային դրույթների բացակայության դեպքում Գրասենյակը հաշվի է առնում անդամ պետություններում դատավարական իրավունքի ընդհանուր ճանաչում ստացած սկզբունքները:

Հոդված 69

Ֆինանսական պարտավորությունների դադարումը

1. Տուրքերի վճարման հետ կապված Գրասենյակի իրավունքները դադարում են այն օրացուցային տարվա ավարտից հետո չորս տարվա ընթացքում, որում տուրքը ենթակա է վճարման:
2. Տուրքերը կամ դրանց գերավճարները վերադարձնելու՝ Գրասենյակի հանդեպ ունեցած իրավունքները դադարում են այն օրացուցային տարվանից 4 տարի հետո, որում ծագել է իրավունքը:
3. 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված ժամկետներն ընդհատվում են 1-ին պարբերությամբ սահմանված դեպքում՝ տուրքի վճարման պահանջի, իսկ 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում՝ հիմնավորված գրավոր պահանջի համաձայն: Ժամկետի ընդհատման դեպքում այն անմիջապես վերսկսվում է և ավարտվում ամենաուշը այն սկսելու տարվա ավարտից վեց տարի հետո, բացառությամբ, եթե միննույն ժամանակ սկսվել է այդ իրավունքը կիրարկելու համար հարուցված դատական վարույթը: Այդ դեպքում ժամկետն ավարտվում է ամենաշուտը վճարի՝ վերջնական որոշման ուժ ստանալուց մեկ տարի հետո:

Մաս 2

Ծախսերը

Հոդված 70

Ծախսերի բաշխումը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու վերաբերյալ վարույթում կամ բողոքարկման վարույթում պարտված կողմը կրում է մյուս կողմի վճարած տուրքերը, ինչպես նաև նրա կողմից կատարած՝ վարույթի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը հոգալու պարտականությունը, այդ թվում՝ գործակալի, խորհրդատուի, փաստաբանի ճանապարհածախսը, օրապահիկը և վարձատրությունը՝ Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն՝ յուրաքանչյուր ծախսային դասի համար սահմանված սանդղակի շրջանակներում:

2. Այնուամենայնիվ, եթե յուրաքանչյուր կողմ հարցերի որոշ մասով շահում է, մյուս մասով՝ պարտվում, կամ եթե արդարության սկզբունքն այդպես է պահանջում, Անվավեր ճանաչելու հարցերով բաժինը կամ Բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում ծախսերն այլ կերպ բաշխելու վերաբերյալ:
3. Այն կողմը, որը դադարեցնում է վարույթը՝ զիջելով Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշը կամ չերկարաձգելով դրա գրանցման ժամկետը, կամ էլ հետ վերցնելով անվավեր ճանաչելու մասին դիմումը կամ բողոքը, վճարում է մյուս կողմի տուրքերը և կրում է նրա ծախսերը՝ 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված կարգով:
4. Եթե գործով վճիռ չի կայացվում, ծախսերը բաշխվում են Անվավեր ճանաչելու հարցերով բաժնի կամ Բողոքարկման խորհրդի հայեցողությամբ:
5. Եթե կողմերը Անվավեր ճանաչելու հարցերով բաժնում կամ Բողոքարկման խորհրդում կնքում են 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով նախատեսված ծախսերի բաշխումից տարբերվող ծախսերի բաշխման մասին համաձայնություն, համապատասխան մարմինն ի գիտություն է ընդունում այդ համաձայնությունը:
6. Դիմումի համաձայն՝ Անվավեր ճանաչելու հարցերով բաժնի կամ Բողոքարկման խորհրդի գրանցամատյանում ամրագրվում է նախորդ պարբերությունների համաձայն վճարվելիք ծախսերի չափը: Այդ կերպ սահմանված գումարի չափը կարող է վերանայվել Անվավեր ճանաչելու հարցերով բաժնի կամ Բողոքարկման խորհրդի որոշմամբ՝ կիրարկող կանոնակարգով նախատեսված ժամկետում ներկայացված դիմումի համաձայն:

Հոդված 71

Ծախսերի չափն ամրագրող որոշումների կատարումը

1. Ծախսերի չափն ամրագրող՝ Գրասենյակի ցանկացած վերջնական որոշում ենթակա է կատարման:
2. Որոշման կատարումը կարգավորվում է դրա կատարման վայրի անդամ պետությունում գործող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Որոշման կատարման հրամանը, առանց որոշման իսկության հաստատումից բացի այլ ձևականության, կցվում է որոշմանն այն ներպետական մարմնի կողմից, որը յուրաքանչյուր անդամ պետության կառավարության կողմից նշանակվում է այդ նպատակով և որի մասին վերջինս տեղեկացնում է Գրասենյակին և Արդարադատության դատարանին:
3. Համապատասխան անձի դիմումի համաձայն այդ ձևականությունները կատարելուց հետո, այդ անձը կարող է որոշման կատարումը նախաձեռնել ներպետական իրավունքին համապատասխան՝ հարցն ուղղակիորեն ներկայացնելով իրավասու մարմին:
4. Որոշման կատարումը կարող է կասեցվել միայն Արդարադատության դատարանի որոշմամբ: Այնուամենայնիվ, համապատասխան անդամ պետության դատարաններն իրավասու են քննելու որոշումները սահմանված կարգի խախտմամբ կատարելու վերաբերյալ բողոքները:

Մաս 3

Հանրությանը և անդամ պետությունների պաշտոնական մարմիններին տեղեկացնելը

Հոդված 72

Համայնքի արդյունաբերական նմուշների գրանցամատյանը

Գրասենյակը վարում է գրանցամատյան, որը հայտնի է որպես Համայնքի արդյունաբերական նմուշների գրանցամատյան և որը պարունակում է այնպիսի մանրամասներ, որոնց գրանցումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ կիրարկող կանոնակարգով: Գրանցամատյանը բաց է հանրության կողմից ուսումնասիրման համար, եթե այլ բան սահմանված չէ հոդված 50«2»-ով:

Հոդված 73

Պարբերաբար կատարվող հրատարակումները

1. Գրասենյակը պարբերաբար հրատարակում է Համայնքի արդյունաբերական նմուշների տեղեկագիր, որը պարունակում է այնպիսի գրառումներ, որոնք բաց են հանրության կողմից ուսումնասիրման համար, ինչպես նաև այլ մանրամասներ, որոնց հրապարակումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ կիրարկող կանոնակարգով:

2. Գրասենյակի ղեկավարի կողմից տրված ծանուցումները և ընդհանուր բնույթի տեղեկությունները, ինչպես նաև սույն Կանոնակարգին կամ դրա կիրարկմանն առնչվող ցանկացած այլ տեղեկությունները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 74

Գործերի ուսումնասիրությունը

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների դեռևս չհրապարակված հայտերի վերաբերյալ գործերը կամ Համայնքի այն գրանցված արդյունաբերական նմուշների հայտերի վերաբերյալ գործերը, որոնց հրապարակումը ենթակա է հետաձգման 50-րդ հոդվածի համաձայն կամ, որոնք, ենթակա լինելով նման հետաձգման, զիջվել են այդ ժամկետի ավարտին կամ դրանից առաջ, մատչելի չեն դարձվի ուսումնասիրման համար առանց Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուի կամ դրա նկատմամբ իրավունքի իրավատիրոջ համաձայնության:

2. Ցանկացած անձ, որը կարող է հաստատել իր օրինական շահը, կարող է առանց Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուի կամ իրավատիրոջ համաձայնության ուսումնասիրել որևէ գործ նախքան դրա հրապարակումը և, 1-ին պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նմուշը զիջելուց հետո:

Դա մասնավորապես կիրառվում է, եթե շահագրգիռ անձն ապացուցում է, որ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն կամ իրավատերը քայլեր է ձեռնարկել

Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշով նրան վերապահված իրավունքն այդ անձի դեմ վկայակոչելու համար:

3. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հրապարակումից հետո գործը կարող է ուսումնասիրվել դիմումի համաձայն:

4. Այնուամենայնիվ, եթե գործն ուսումնասիրվում է 2-րդ կամ 3-րդ պարբերությունների համաձայն, ապա դրա որոշ փաստաթղթերի ուսումնասիրությունը կարող է արգելվել՝ կիրարկող կանոնակարգի դրույթների համաձայն:

Հոդված 75

Վարչական համագործակցությունը

Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով կամ ներպետական իրավական ակտերով, Գրասենյակը, անդամ պետությունների դատարանները կամ մարմինները հարցման դեպքում միմյանց օգնություն են տրամադրում՝ տեղեկություններ փոխանցելով կամ ուսումնասիրության համար մատչելի դարձնելով հայտի նյութերը:

Եթե Գրասենյակը գործերը մատչելի է դարձնում դատարանների, դատախազությունների կամ արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակների կողմից ուսումնասիրության համար, ապա այդ ուսումնասիրությունը ենթակա չէ 74-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներին:

Հոդված 76

Հրատարակությունների փոխանակումը

1. Գրասենյակը և անդամ պետությունների արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակները հարցման համաձայն իրենց օգտագործման համար միմյանց անվճար տրամադրում են իրենց համապատասխան հրատարակությունների մեկ կամ ավելի օրինակներ:

2. Գրասենյակը կարող է հրատարակությունների փոխանակման կամ տրամադրման վերաբերյալ պայմանագրեր կնքել:

Մաս 4

Ներկայացուցչությունը

Հոդված 77

Ներկայացուցչության ընդհանուր սկզբունքները

1. 2-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ ոչ ոքի չի կարելի պարտադրել Գրասենյակում հանդես գալ ներկայացուցչի միջոցով:

2. Չսահմանափակելով 3-րդ պարբերության երկրորդ ենթապարբերության գործողությունը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց բնակության (գտնվելու) վայրը կամ գործունեության հիմնական վայրը կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայրը Համայնքում չէ, սույն Կանոնակարգով նախատեսված բոլոր վարույթների ընթացքում պետք է ներկայացված լինեն Գրասենյակում հոդված 78«1»-ին համապատասխան՝ բացառությամբ Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացնելու ընթացակարգի. կիրարկող կանոնակարգով կարող են թույլատրվել այլ բացառություններ:

3. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց բնակության (գտնվելու) կամ գործունեության հիմնական վայրը, իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայրը Համայնքում չէ, Գրասենյակում կարող է ներկայացնել նրանց աշխատողը, որը գործին կցելու համար պետք է Գրասենյակ ներկայացնի լիազորագիր կիրարկող կանոնակարգով սահմանված կարգով:

Այն իրավաբանական անձի աշխատողը, որի նկատմամբ կիրառվում է սույն պարբերությունը, կարող է նաև ներկայացնել այդ իրավաբանական անձի հետ տնտեսական կապեր ունեցող այլ իրավաբանական անձանց, եթե նույնիսկ այդ իրավաբանական անձանց գտնվելու կամ գործունեության հիմնական վայրը կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայրը Համայնքում չէ:

Հոդված 78

Մասնագետ ներկայացուցիչները

1. Գրասենյակում իրականացվող վարույթներում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սույն Կանոնակարգի համաձայն կարող է ներկայացնել միայն՝

ա) անդամ պետություններից մեկում որակավորված և Համայնքում գործունեության վայր ունեցող ցանկացած պրակտիկ իրավաբան, եթե նա այդ պետությունում արդյունաբերական նմուշի հետ կապված հարցերում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունի կամ

բ) ցանկացած մասնագետ ներկայացուցիչ, ում անունն ընդգրկված է Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի հոդված 89«1»«բ»-ում նշված մասնագետ ներկայացուցիչների ցուցակում, կամ

գ) անձինք, ում անուններն ընդգրկված են 4-րդ պարբերությունում նշված՝ արդյունաբերական նմուշի հետ կապված հարցերում մասնագետ ներկայացուցիչների հատուկ ցուցակում: 2. Պարբերությունում 1«գ»-ում նշված անձինք միայն լիազորված են երրորդ անձանց ներկայացնել Գրասենյակում իրականացվող արդյունաբերական նմուշի հետ կապված վարույթներում:

3. Կիրարկող կանոնակարգը նախատեսում է, թե արդյոք ներկայացուցիչները պետք է Գրասենյակ ներկայացնեն լիազորագիր՝ գործերին կցելու համար, ինչպես նաև այն ներկայացնելու պայմանները:

4. Արդյունաբերական նմուշի հարցերով մասնագետ ներկայացուցիչների հատուկ ցուցակը կարող է համալրել ցանկացած ֆիզիկական անձ, որը բավարարում է հետևյալ պայմանները՝

ա) նա պետք է լինի որևէ անդամ պետության քաղաքացի.

բ) նրա գործունեություն վայրը Համայնքում է կամ նա աշխատում է Համայնքում.

գ) նա պետք է իրավասու լինի արդյունաբերական նմուշների հետ կապված հարցերում ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում կամ Բենիլյուքսի արդյունաբերական նմուշների գրասենյակում:

Եթե տվյալ պետությունում արդյունաբերական նմուշի հետ կապված հարցերով ներկայացուցիչ լինելը պայմանավորված չէ հատուկ մասնագիտական որակավորումներով, ցուցակում ընդգրկվելու համար դիմած անձինք պետք է տվյալ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում արդյունաբերական նմուշի հետ կապված հարցերում որպես ներկայացուցիչ հանդես գալու առնվազն հինգ տարվա փորձ ունենան:

Այնուամենայնիվ, այն անձինք, որոնց՝ անդամ պետություններից մեկի արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում արդյունաբերական նմուշի հետ կապված հարցերում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ներկայացնելու մասնագիտական որակավորումները պաշտոնապես ճանաչված են՝ այդ պետության ընդունած կանոնակարգերին համապատասխան, կարող են չբավարարել տվյալ ոլորտում համապատասխան փորձ ունենալու պահանջը:

5. 4–րդ պարբերությունում նշված ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում, ինչպես նաև համապատասխան անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակի կողմից տրամադրված՝ նշված պարբերությամբ սահմանված պայմանների բավարարումը վկայող հավաստագիր:

6. Գրասենյակի ղեկավարը կարող է ազատել՝

ա) պարբերություն 4«ա»-ի պահանջների կատարումից՝ հատուկ հանգամանքներում.

բ) պարբերություն 4«գ»-ի երկրորդ նախադասության պահանջների կատարումից, եթե հայտատուն ապացույց է ներկայացնում, որ նա այլ կերպ է ձեռք բերել անհրաժեշտ որակավորումը:

7. Ցուցակից անձանց հանելու պայմանները սահմանվում են կիրարկող կանոնակարգով:

ԲԱԺԻՆ IX

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՅԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Մաս 1

Իրավասությունը և կատարումը

Հոդված 79

Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի կիրառումը

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, 1968 թվականի սեպտեմբերի 27-ին Բրյուսելում ստորագրված «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների կատարման մասին» կոնվենցիան⁷, այսուհետ՝ «Իրավասության և կատարման մասին կոնվենցիա», տարածվում է Համայնքի արդյունաբերական նմուշների և Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերի վերաբերյալ վարույթների, ինչպես նաև համաժամանակյա պահպանությունից օգտվող Համայնքի արդյունաբերական նմուշների և ազգային արդյունաբերական նմուշների հիման վրա հարուցված հայցերով վարույթների նկատմամբ:

2. Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի դրույթները, որոնք կիրառելի են համարվում 1-ին պարբերությամբ, ցանկացած անդամ պետության նկատմամբ գործում են տվյալ պահի դրությամբ այդ պետությունում ուժի մեջ գտնվող տարբերակով:

3. 85-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթների դեպքում՝

ա) չեն կիրառվում Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի 2-րդ և 4-րդ հոդվածները, հոդվածներ 5«1»-ը, «3»-ը, «4»-ը, «5»-ը, 16«4»-ը և 24-րդ հոդվածը.

բ) այդ կոնվենցիայի 17-րդ և 18-րդ հոդվածները կիրառվում են սույն Կանոնակարգի 82«4» հոդվածի սահմանափակումների պահպանմամբ.

գ) այդ կոնվենցիայի II բաժնի դրույթները, որոնք կիրառվում են անձանց նկատմամբ, որոնց բնակության (գտնվելու) վայրը անդամ պետությունում է, կիրառվում են նաև այն անձանց նկատմամբ, որոնց բնակության (գտնվելու) վայրը որևէ անդամ պետությունում չէ, սակայն տնտեսական գործունեության իրականացման վայրն է:

4. Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի դրույթները չեն գործում անդամ պետություններում, որտեղ այդ կոնվենցիան դեռ ուժի մեջ չի մտել: Նախքան այդ կոնվենցիան ուժի մեջ մտնելը, նման անդամ պետությունում 1-ին պարբերությունում նշված վարույթները կարգավորվում են այդ պետության հարաբերությունները մեկ այլ անդամ պետության հետ կարգավորող որևէ երկկողմ կամ բազմակողմ կոնվենցիայով կամ, եթե այդպիսին գոյություն

⁷ ՊՏ, L 299, 31.12.1972թ., էջ 32: Եվրոպական համայնքներին անդամակցող պետությունների՝ այդ կոնվենցիային միանալու մասին կոնվենցիաներով փոփոխված կոնվենցիա:

չունի, այդ պետության՝ իրավասության, որոշումների ճանաչման և կատարման վերաբերյալ ներպետական իրավունքով:

Մաս 2

Համայնքի արդյունաբերական նմուշների ապօրինի օգտագործման և վավերության հետ կապված վեճերը

Հոդված 80

Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանները

1. Անդամ պետություններն իրենց տարածքներում նշանակում են հնարավորինս սահմանափակ թվով առաջին և երկրորդ աստիճանի ներպետական դատարաններ և տրիբունալներ (Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարաններ), որոնք իրականացնում են սույն Կանոնակարգով իրենց վերապահված գործառույթները:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ոչ ուշ, քան 2005 թվականի մարտի 6–ը Հանձնաժողովին ներկայացնում է Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանների ցանկ՝ նշելով դրանց անվանումները և տարածքային ընդդատության կանոնների համաձայն դրանց ընդդատյա գործերը:

3. 2-րդ պարբերությունում նշված ցանկը Հանձնաժողովին ներկայացնելուց հետո դրանում Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանների թվի, անվանման կամ տարածքային ընդդատության կանոնների վերաբերյալ կատարված որևէ փոփոխության մասին համապատասխան անդամ պետությունն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովին:

4. Հանձնաժողովը 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկությունների մասին ծանուցում է անդամ պետություններին, և դրանք հրապարակվում են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

5. Քանի դեռ անդամ պետությունը չի հաղորդել 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկը, 81-րդ հոդվածով նախատեսված հայցից բխող ցանկացած այն վարույթի նկատմամբ իրավասությունը, որի նկատմամբ, 82-րդ հոդվածի համաձայն, տվյալ անդամ պետության դատարաններն օժտված են իրավասությամբ, վերապահվում է տվյալ պետությունում այն դատարանին, որը տարածքային և առարկայական ընդդատության կանոնների համաձայն իրավասություն ունի այդ պետության ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վարույթների նկատմամբ:

Հոդված 81

Իրավասությունը ապօրինի օգտագործման և վավերության վերաբերյալ հայցերի նկատմամբ

Համայնքի արդյունաբերական նմուշի հետ կապված վեճեր քննող դատարանները բացառիկ իրավասություն ունեն՝

ա) ապօրինի օգտագործման վերաբերյալ հայցերի, ինչպես նաև Համայնքի արդյունաբերական նմուշների ապօրինի օգտագործման վտանգի վերաբերյալ հայցերի նկատմամբ, եթե դրանք նախատեսված են ներպետական իրավունքով:

բ) Համայնքի արդյունաբերական նմուշի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցերի նկատմամբ, եթե դրանք նախատեսված են ներպետական իրավունքով:

գ) Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցերի նկատմամբ:

դ) «ա»-ով նախատեսված հայցերի դեմ ներկայացված՝ Համայնքի արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու վերաբերյալ հակընդդեմ հայցերի նկատմամբ:

Հոդված 82

Միջազգային իրավասությունը

1. Մույն Կանոնակարգի դրույթների, ինչպես նաև Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի՝ 79-րդ հոդվածի ուժով կիրառվող ցանկացած դրույթի պահպանմամբ՝ 81-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթները հարուցվում են պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի անդամ պետության դատարաններ, իսկ եթե պատասխանողի բնակության (գտնվելու) վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ՝ նրա տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետության դատարաններ:

2. Եթե պատասխանողի բնակության (գտնվելու) կամ տնտեսական գործունեության իրականացման վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ, նման վարույթները հարուցվում են հայցվորի բնակության (գտնվելու) վայրի անդամ պետության դատարաններ, իսկ եթե հայցվորի բնակության (գտնվելու) վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ՝ նրա տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետության դատարաններ:

3. Եթե ոչ պատասխանողի, ոչ էլ հայցվորի բնակության (գտնվելու) կամ տնտեսական գործունեության իրականացման վայրն անդամ պետությունում չէ, նման վարույթները հարուցվում են Գրասենյակի նստավայրի անդամ պետության դատարաններ:

4. Անկախ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններից՝

ա) եթե կողմերը համաձայնության են գալիս Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող այլ դատարանի իրավասության վերաբերյալ, կիրառվում է Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածը:

բ) եթե պատասխանողը ներկայանում է Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող այլ դատարան, կիրառվում է այդ կոնվենցիայի 18-րդ հոդվածը:

5. Հոդված 81 «ա»-ում և 81 «դ»-ում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթները կարող են նաև հարուցվել այն անդամ պետության դատարաններ, որտեղ ապօրինի կերպով օգտագործվել է արդյունաբերական նմուշը կամ դրա ապօրինի օգտագործման վտանգ է ստեղծվել:

Հոդված 83

Ապօրինի օգտագործման դեպքերի նկատմամբ իրավասության շրջանակը

1. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 82«1»-ի, «2»-ի, «3»-ի կամ «4»-ի վրա, իրավասություն ունի ցանկացած անդամ պետության տարածքում կատարված՝ արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման գործողությունների կամ դրանց վտանգի վերաբերյալ հայցերի նկատմամբ:
2. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 82«5»-ի վրա, իրավասություն ունի միայն տվյալ դատարանի վայրի անդամ պետության տարածքում արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման գործողությունների կամ դրանց վտանգի վերաբերյալ հայցերի նկատմամբ:

Հոդված 84

Համայնքի արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հայցը կամ հակընդդեմ հայցը

1. Համայնքի արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հայցը կամ հակընդդեմ հայցը կարող է հիմնված լինել միայն 25-րդ հոդվածում նշված անվավերության հիմքերի վրա:
2. Հոդված 25«2»-ում, «3»-ում, «4»-ում և «5»-ում նշված դեպքերում հայցը կամ հակընդդեմ հայցը կարող է հարուցվել միայն այդ դրույթների համաձայն նման իրավունք ունեցող անձի կողմից:
3. Եթե հակընդդեմ հայց է հարուցվել այն վարույթի շրջանակներում, որի կողմ Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատերը դեռ չի հանդիսանում, նա տեղեկացվում է այդ մասին և կարող է ներգրավվել որպես վարույթի կողմ՝ դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով սահմանված պայմաններին համապատասխան:
4. Համայնքի արդյունաբերական նմուշի վավերությունը չի կարող վիճարկվել արդյունաբերական նմուշի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցի քննության շրջանակում:

Հոդված 85

Արդյունաբերական նմուշի վավերության կանխավարկածը. պաշտպանությունն ըստ գործի էության

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման կամ նման վտանգի վերաբերյալ հայցերով վարույթներում Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանն առաջնորդվում է Համայնքի արդյունաբերական նմուշի վավերության կանխավարկածով: Վավերությունը կարող է վիճարկվել միայն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցով: Այնուամենայնիվ, Համայնքի արդյունաբերական նմուշի անվավերության հետ կապված պահանջը, որը ներկայացվում է հակընդդեմ հայցից բացի այլ եղանակով, ընդունելի է այնքանով, որքանով պատասխանողը պնդում է, որ Համայնքի արդյունաբերական նմուշը կարող է հոդված 25«1»«դ»-ի իմաստով անվավեր ճանաչվել առավել վաղ ծագած և իրեն պատկանող՝ ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի հիմքով:

2. Համայնքի չգրանցված արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման կամ նման վտանգի վերաբերյալ հայցերով վարույթներում Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանն առաջնորդվում է Համայնքի արդյունաբերական նմուշի վավերության կանխավարկածով, եթե իրավատերն ապացույց է ներկայացնում այն մասին, որ 11-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարվել են, և նշում է, թե ինչում է կայանում իր Համայնքի արդյունաբերական նմուշի ինքնատիպությունը: Այնուամենայնիվ, պատասխանողը կարող է նմուշի վավերությունը վիճարկել պահանջի կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցի միջոցով:

Հոդված 86

Անվավեր ճանաչելու վերաբերյալ վճիռները

1. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանում իրականացվող վարույթի շրջանակներում Համայնքի արդյունաբերական նմուշի վավերությունը վիճարկվում է այն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցի միջոցով՝ ա) դատարանն անվավեր է ճանաչում Համայնքի արդյունաբերական նմուշը, եթե գտնում է, որ առկա է արդյունաբերական նմուշի պահպանմանը խոչընդոտող՝ 25-րդ հոդվածում նշված հիմքերից որևէ մեկը.

բ) դատարանը մերժում է հակընդդեմ հայցը, եթե գտնում է, որ Համայնքի արդյունաբերական նմուշի պահպանմանը խոչընդոտող՝ 25-րդ հոդվածում նշված հիմքերից որևէ մեկն առկա չէ:

2. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը, որտեղ հարուցվել է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցը, Գրասենյակին հայտնում է հակընդդեմ հայցի հարուցման թվականը: Գրասենյակն այդ փաստը գրանցում է գրանցամատյանում:

3. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայց քննող Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը կարող է, Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի իրավատիրոջ միջնորդությամբ և մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնել վարույթը և պատասխանողից պահանջել դատարանի կողմից սահմանված ժամկետում Գրասենյակ ներկայացնել արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին դիմում: Եթե դիմումը չի ներկայացվում սահմանված ժամկետում, վարույթը շարունակվում է, և համարվում է, որ պատասխանողը հրաժարվել է հակընդդեմ հայցից: Կիրառվում է հոդված 91«3»-ը:

4. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցով վճիռ է կայացնում, որը դառնում է վերջնական, այդ վճռի պատճենն ուղարկվում է Գրասենյակ: Ցանկացած կողմ կարող է այդ փոխանցման մասին տեղեկություններ ստանալու հարցում ներկայացնել: Գրասենյակը վճռի մասին գրառում է կատարում գրանցամատյանում՝ կիրարկող կանոնակարգի դրույթներին համապատասխան:

5. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայց չի կարող հարուցվել, եթե միննույն առարկայով ու հիմքով և նույն կողմերը ներառող հայցի վերաբերյալ վերջնական դարձած որոշում է կայացվել Գրասենյակի կողմից:

Հոդված 87

Անվավեր ճանաչելու վերաբերյալ վճռի հետևանքները

Համայնքի արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու վերաբերյալ Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանի վճիռը, վերջնական դատնալուց հետո, բոլոր անդամ պետություններում ունի 26-րդ հոդվածով սահմանված հետևանքները:

Հոդված 88

Կիրառվող իրավունքը

1. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանները կիրառում են սույն Կանոնակարգի դրույթները: 2. Սույն Կանոնակարգով չկարգավորվող բոլոր հարցերի նկատմամբ Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը կիրառում է իր ներպետական իրավունքը, այդ թվում՝ միջազգային մասնավոր իրավունքը: 3. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը կիրառում է դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի վերաբերյալ միևնույն տեսակի հայցերը կարգավորող ընթացակարգային կանոնները:

Հոդված 89

Պատժամիջոցները ապօրինի օգտագործման վերաբերյալ հայցերում

1. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման կամ նման վտանգի վերաբերյալ հայցերով Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը գտնում է, որ պատասխանողը Համայնքի արդյունաբերական նմուշն օգտագործել է ապօրինի կերպով կամ նման վտանգ ստեղծող գործողություններ է կատարել, ապա, եթե այդպես չվարվելու հատուկ պատճառներ չկան, որոշում է կայացնում հետևյալ միջոցները կիրառելու մասին՝

ա) որոշում պատասխանողի կողմից Համայնքի արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործումը կամ այդպիսի օգտագործման վտանգ ստեղծող գործողությունների շարունակումն արգելելու մասին.

բ) որոշում արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործում կամ դրա վտանգ մարմնավորող արտադրանքներն առգրավելու մասին.

գ) որոշում այն նյութերը և սարքավորումները առգրավելու մասին, որոնք առավելապես օգտագործվել են արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործում մարմնավորող ապրանքներն արտադրելու համար, եթե դրանց սեփականատերը տեղյակ է եղել նման օգտագործման հետևանքի մասին, կամ եթե այդ հետևանքն ակնհայտ էր տվյալ հանգամանքներում.

դ) ցանկացած այլ որոշում տվյալ հանգամանքներում նպատակահարմար այնպիսի պատժամիջոցներ կիրառելու մասին, որոնք նախատեսված են այն անդամ պետության իրավունքով, որտեղ ապօրինի կերպով օգտագործվել է Համայնքի արդյունաբերական նմուշը կամ նման վտանգ ստեղծող գործողություններ են կատարվել ներառյալ այդ պետության միջազգային մասնավոր իրավունքը:

2. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը իր ներպետական իրավունքին համապատասխան ձեռնարկում է 1-ին պարբերությունում նշված որոշումների կատարումն ապահովող միջոցներ:

Հոդված 90

Ժամանակավոր, ներառյալ հայցի ապահովման միջոցները

1. Համայնքի արդյունաբերական նմուշի վերաբերյալ անդամ պետության դատարաններ, այդ թվում՝ Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարաններ կարող է ներկայացվել տվյալ անդամ պետության ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների մասին իրավական նորմերով նախատեսված ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու միջնորդություն, եթե նույնիսկ, սույն Կանոնակարգի համաձայն, գործն ըստ էության քննելու իրավասություն ունեն մեկ այլ անդամ պետության Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանները:

2. Ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցների վերաբերյալ վարույթներում պատասխանողի կողմից ոչ հակընդդեմ հայցի ձևով ներկայացված՝ Համայնքի արդյունաբերական նմուշի անվավերության վերաբերյալ պահանջն ընդունելի է: Այնուամենայնիվ, հոդված 85«2»-ը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

3. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 82 «1», «2», «3» կամ «4»-ի վրա, իրավասու է ձեռնարկել ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցներ, որոնք, Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի III բաժնով նախատեսված՝ ճանաչման և կատարման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերի պահպանմամբ, ենթակա են կիրառման ցանկացած անդամ պետության տարածքում: Ոչ մի այլ դատարան օժտված չէ նման իրավասությամբ:

Հոդված 91

Փոխկապակցված հայցերի վերաբերյալ հատուկ կանոնները

1. Բացառությամբ Համայնքի ապրանքային նշանի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցի՝ 81-րդ հոդվածում նշված որևէ հայց քննող Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը, եթե չկան հայցի քննությունը շարունակելու հատուկ հիմքեր, սեփական նախաձեռնությամբ և կողմերին լսելուց հետո կամ կողմերից մեկի միջնորդությամբ և մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնում է վարույթը, եթե Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող մեկ այլ դատարանում հակընդդեմ հայցի շրջանակում վիճարկվում է Համայնքի արդյունաբերական նմուշի վավերությունը կամ, Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի դեպքում, եթե անվավեր ճանաչելու վերաբերյալ արդեն դիմում է ներկայացվել Գրասենյակ:

2. Գրասենյակը Համայնքի արդյունաբերական նմուշն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում քննելիս, եթե չկան դիմումի քննությունը շարունակելու հատուկ հիմքեր, սեփական նախաձեռնությամբ և կողմերին լսելուց հետո կամ կողմերից մեկի միջնորդությամբ և մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնում է վարույթը, եթե Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանի վարույթում գտնվող հակընդդեմ հայցի շրջանակում վիճարկվում է Համայնքի արդյունաբերական նմուշի վավերությունը: Այնուամենայնիվ, Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանում իրականացվող վարույթի կողմերից մեկի միջնորդությամբ դատարանը կարող է, վարույթի մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնել վարույթը: Այդ դեպքում Գրասենյակը վերսկսում է կասեցված վարույթները:

3. Եթե Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը կասեցնում է վարույթը, այն կարող է կասեցման ժամանակահատվածի համար ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել:

Հոդված 92

Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարանների իրավասությունը. հետագա բողոքարկումը

1. 81-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների հիման վրա հարուցված վարույթների վերաբերյալ Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող առաջին աստյանի դատարանի վճիռները ենթակա են բողոքարկման Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարան:

2. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարան բողոք բերելու պայմանները սահմանվում են այդ դատարանի գտնվելու վայրի անդամ պետության ներպետական իրավունքով:

3. Հետագա բողոքարկման վերաբերյալ ներպետական կանոնները կիրառվում են Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարանի վճիռների նկատմամբ:

Մաս 3

Համայնքի արդյունաբերական նմուշների վերաբերյալ այլ վեճերը

Հոդված 93

Լրացուցիչ դրույթներ՝ Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարաններից բացի ազգային այլ դատարանների իրավասության վերաբերյալ

1. Անդամ պետությունում, որի դատարանները հոդված 79«1»-ի կամ «4»-ի համաձայն օժտված են իրավասությամբ, Համայնքի արդյունաբերական նմուշների վերաբերյալ 81-րդ հոդվածում նշված հայցերից բացի այլ հայցեր քննելու իրավասությամբ օժտված են այն դատարանները, որոնք տարածքային և առարկայական ընդդատության կանոնների համաձայն իրավասություն

կունենային այդ պետության ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վարույթների նմատմամբ:

2. Համայնքի արդյունաբերական նմուշի վերաբերյալ 81-րդ հոդվածում նշված հայցերից բացի այլ հայցերը, որոնց նկատմամբ ոչ մի դատարան հոդված 79«1»-ի և «4»-ի և սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն իրավասություն չունի, կարող են քննել Գրասենյակի նստավայրի անդամ պետության դատարանները:

Հոդված 94

Ներպետական դատարանի պարտականությունը

Համայնքի արդյունաբերական նմուշի վերաբերյալ 81-րդ հոդվածում նշված հայցերից բացի այլ հայց քննող ներպետական դատարանը ղեկավարվում է արդյունաբերական նմուշի վավերության կանխավարկածով: Այնուամենայնիվ, հոդվածներ 85«2»-ը և 90«2»-ը կիրառվում են համապատասխան փոփոխություններով.

ԲԱԺԻՆ X

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎՐԱ

Հոդված 95

Համայնքի արդյունաբերական նմուշների և ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների վրա հիմնված գուգահեռ հայցերը

1. Եթե արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման կամ այդպիսի վտանգ ստեղծող գործողությունների վերաբերյալ միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող հայցեր են հարուցվում տարբեր անդամ պետությունների դատարաններ, որոնցից մեկը հայցը վարույթ է ընդունել Համայնքի արդյունաբերական նմուշի, իսկ մյուսը՝ համաժամանակյա պահպանություն տրամադրող ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի հիման վրա, հայցը ոչ առաջինը վարույթ ընդունած դատարանը սեփական նախաձեռնությամբ հրաժարվում է իրավասությունից հօգուտ մյուս դատարանի: Դատարանը, որից պահանջվում է հրաժարվել իրավասությունից, կարող է կասեցնել իր վարույթում գտնվող գործի քննությունը, եթե վիճարկվում է մյուս դատարանի իրավասությունը:

2. Համայնքի արդյունաբերական նմուշների հետ կապված վեճեր քննող դատարանը Համայնքի արդյունաբերական նմուշի ապօրինի օգտագործման կամ այդպիսի վտանգի վերաբերյալ հայց քննելիս մերժում է հայցը, եթե գործն ըստ էության լուծող վերջնական վճիռ է կայացվել միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող՝ համաժամանակյա պահպանություն տրամադրող արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի հիման վրա հայցի վերաբերյալ:

3. Ազգային արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի հիման վրա ապօրինի օգտագործման կամ այդպիսի վտանգի վերաբերյալ հայց քննելիս դատարանը մերժում է հայցը, եթե գործն ըստ էության լուծող վերջնական վճիռ է կայացվել միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող՝ համաժամանակյա պահպանություն տրամադրող Համայնքի արդյունաբերական նմուշի հիման վրա հայցի վերաբերյալ:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները չեն կիրառվում ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցների նկատմամբ:

Հոդված 96

Առնչությունը ներպետական իրավունքով նախատեսված պահպանության այլ ձևերին

1. Սույն Կանոնակարգի դրույթները չեն սահմանափակում Համայնքի իրավունքի կամ համապատասխան անդամ պետության իրավունքի որևէ դրույթի գործողությունը, որը վերաբերում է չգրանցված արդյունաբերական նմուշներին, ապրանքային նշաններին կամ որևէ այլ տարբերանշանի, արտոնագրերին և օգտակար մոդելներին, տառատեսակներին, քաղաքացիական պատասխանատվությանը և անարդար մրցակցությանը: 2. Համայնքի արդյունաբերական նմուշով պահպանվող արդյունաբերական նմուշը պահպանության իրավունք ունի նաև անդամ պետությունների հեղինակային իրավունքի մասին իրավական նորմերով՝ արդյունաբերական նմուշի ստեղծման կամ որևէ ձևով դրա ամրագրման թվականից: Պահպանության ծավալը և պայմանները, ներառյալ՝ ինքնատիպության պահանջվող մակարդակը, սահմանում է յուրաքանչյուր անդամ պետություն:

ԲԱԺԻՆ XI

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ

Մաս 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 97

Ընդհանուր դրույթ

Եթե այլ բան նախատեսված չէ սույն բաժնով, Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի XII բաժինը կիրառվում է Գրասենյակի նկատմամբ՝ սույն Կանոնակարգի համաձայն դրա խնդիրների առնչությամբ:

Հոդված 98

Վարույթների լեզուն

1. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը ներկայացվում է Համայնքի պաշտոնական լեզուներից մեկով:

2. Հայտատուն պետք է նշի որևէ երկրորդ լեզու, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից մեկն է, և որի գործածությունը նա ընդունում է որպես Գրասենյակում իրականացվող վարույթների հնարավոր լեզու:

Եթե հայտը ներկայացվել է մի լեզվով, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից և ոչ մեկը չէ, Գրասենյակը կազմակերպում է հայտի թարգմանությունը հայտատուի կողմից նշված լեզվով:

3. Եթե Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտատուն Գրասենյակում իրականացվող վարույթի միակ կողմն է, վարույթի լեզուն այն լեզուն է, որով ներկայացվել է հայտը: Եթե հայտը չի ներկայացվել Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից մեկով, Գրասենյակը կարող է գրավոր հաղորդումները հայտատուին ուղարկել վերջինիս կողմից հայտում նշված երկրորդ լեզվով:

4. Անվավերության վերաբերյալ վարույթի դեպքում, վարույթի լեզուն այն լեզուն է, որով ներկայացվել է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը, եթե դա Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից է: Եթե հայտը չի ներկայացվել Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից մեկով, վարույթի լեզուն հայտում նշված երկրորդ լեզուն է:

Անվավեր ճանաչելու մասին դիմումը ներկայացվում է վարույթի լեզվով:

Եթե վարույթի լեզուն այն լեզուն չէ, որով ներկայացվել է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտը, Համայնքի արդյունաբերական նմուշի իրավատերը կարող է իր դիտողությունները ներկայացնել հայտի լեզվով: Գրասենյակը կազմակերպում է այդ դիտողությունների թարգմանությունը վարույթի լեզվով:

Կիրարկող կանոնակարգը կարող է նախատեսել, որ Գրասենյակի կրած թարգմանության ծախսերը, գործի բարդությամբ արդարացված դեպքերում Գրասենյակի կատարած բացառությունների պահպանմամբ, չեն կարող գերազանցել վարույթների յուրաքանչյուր դասի համար՝ Գրասենյակի կողմից ստացված գործի փաստաթղթերի միջին ծավալի հիման վրա սահմանված գումարը: Այդ գումարը գերազանցող ծախսերը կրելու պարտականությունը կարող է 70-րդ հոդվածին համապատասխան դրվել պարտվող կողմի վրա:

5. Անվավերության վերաբերյալ վարույթի կողմերը կարող են համաձայնել, որ վարույթի լեզուն լինի Համայնքի այլ պաշտոնական լեզու:

Հոդված 99

Հրապարակումը և գրանցումը

1. Այն բոլոր տեղեկությունները, որոնց հրապարակումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ կիրարկող կանոնակարգով, հրապարակվում են Համայնքի բոլոր պաշտոնական լեզուներով:

2. Համայնքի արդյունաբերական նմուշների գրանցամատյանում բոլոր գրառումները կատարվում են Համայնքի բոլոր պաշտոնական լեզուներով:

3. Վիճահարույց դեպքերում բնօրինակ է համարվում Գրասենյակի կողմից գործածվող՝ այն լեզվով կազմված տեքստը, որով ներկայացվել է Համայնքի արդյունաբերական նմուշի հայտը: Եթե հայտը ներկայացվել է Համայնքի պաշտոնական լեզուներից մեկով, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից չէ, բնօրինակ է համարվում հայտատուի կողմից նշված՝ երկրորդ լեզվով կազմված տեքստը:

Հոդված 100

Գրասենյակի ղեկավարի լրացուցիչ լիազորությունները

Ի լրումն Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի 119-րդ հոդվածով Գրասենյակի ղեկավարին վերապահված գործառույթների և լիազորությունների՝ ղեկավարը կարող է, Վարչական խորհրդի, իսկ տուրքերի մասին կանոնակարգի դեպքում՝ Բյուջետային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, Հանձնաժողովին ներկայացնել սույն Կանոնակարգում, կիրարկող կանոնակարգում, տուրքերի մասին կանոնակարգում ինչպես նաև ցանկացած այլ կանոնում փոփոխություններ կատարելու մասին ցանկացած առաջարկ այնքանով, որքանով դրանք կիրառվում են Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների նկատմամբ:

Հոդված 101

Վարչական խորհրդի լրացուցիչ լիազորությունները

Ի լրումն Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի 121-րդ հոդվածով և դրան հաջորդող հոդվածներով կամ սույն Կանոնակարգի այլ դրույթներով իրեն վերապահված լիազորությունների՝ Վարչական խորհուրդը՝

ա) հոդված 111«2»-ի համաձայն սահմանում է, թե որ օրվանից կարող են ներկայացվել Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերը.

բ) խորհրդատվություն է տրամադրում նախքան ձևական պահանջների հետ կապված փորձաքննության, Գրասենյակում իրականացնող անվավերության վարույթների և գրանցումը մերժելու հիմքերի հետ կապված փորձաքննության համար ուղեցույցների ընդունումը և սույն Կանոնակարգով նախատեսված այլ դեպքերում:

Մաս 2

Ընթացակարգերը

Հոդված 102

Իրավասությունը

Սույն Կանոնակարգով սահմանված ընթացակարգերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեն՝

ա) փորձաքննություն իրականացնողները.

բ) Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների կառավարման և իրավաբանական բաժինը.

գ) Անվավեր ճանաչելու հարցերով բաժինները.

դ) Բողոքարկման խորհուրդները:

Հոդված 103

Փորձաքննություն իրականացնողները

Փորձաքննություն իրականացնողը պատասխանատու է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հայտի վերաբերյալ Գրասենյակի անունից որոշումներ կայացնելու համար:

Հոդված 104

Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների կառավարման և իրավաբանական բաժինը

1. Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի 128-րդ հոդվածով նախատեսված Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժինը դառնում է Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների կառավարման և իրավաբանական բաժին:

2. Ի լրումն Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգով իրեն վերապահված լիազորությունների՝ այն պատասխանատու է սույն Կանոնակարգով պահանջվող այն որոշումների կայացման համար, որոնք դուրս են փորձաքննություն իրականացնողի կամ Անվավեր ճանաչելու հարցերով բաժնի իրավասության շրջանակներից: Այն, մասնավորապես, պատասխանատու է գրանցամատյանում գրառումներ կատարելու վերաբերյալ որոշումների կայացման համար:

Հոդված 105

Անվավեր ճանաչելու հարցերով բաժինները

1. Անվավեր ճանաչելու հարցերով բաժինը պատասխանատու է Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշներն անվավեր ճանաչելու մասին դիմումների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

2. Անվավեր ճանաչելու հարցերով բաժինը բաղկացած է երեք անդամից: Անդամներից առնվազն մեկը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին:

Հոդված 106

Բողոքարկման խորհուրդները

Ի լրումն Համայնքի ապրանքային նշանի մասին կանոնակարգի 131-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների՝ այդ Կանոնակարգով հիմնադրված Բողոքարկման խորհուրդները պատասխանատու են փորձաքննություն իրականացնողների, Անվավեր ճանաչելու հարցերով բաժինների և Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների կառավարման և իրավաբանական բաժնի՝ Համայնքի արդյունաբերական նմուշների վերաբերյալ կայացրած որոշումների բողոքարկումների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

ԲԱԺԻՆ XII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 107

Կիրարկող կանոնակարգը

1. Սույն Կանոնակարգը կիրարկող կանոններն ընդունվում են կիրարկող կանոնակարգով:

2. Ի լրումն սույն Կանոնակարգով արդեն իսկ նախատեսված տուրքերի, տուրքերը գանձվում են՝ կիրարկող կանոնակարգով և տուրքերի մասին կանոնակարգով սահմանված կիրառման մանրամասն կանոններին համապատասխան, ստորև նշված դեպքերում՝

ա) գրանցման համար տուրքի վճարման ուշացում.

բ) հրապարակման համար տուրքի վճարման ուշացում.

գ) հրապարակման հետաձգման համար տուրքի վճարման ուշացում.

դ) մի քանի նմուշների համար ներկայացվող հայտերի համար լրացուցիչ տուրքերի վճարման ուշացում.

ե) գրանցման վկայականի պատճենի տրամադրում.

զ) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի փոխանցման գրանցում.

է) Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշի հետ կապված լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցում.

ը) լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցման գործողության դադարեցում.

թ) գրանցամատյանից քաղվածքի տրամադրում.

ժ) գործերի ուսումնասիրություն.

ժա) գործի փաստաթղթերի պատճենների տրամադրում.

ժբ) գործում առկա տեղեկությունների հաղորդում.

ժգ) փոխհատուցման ենթակա ընթացակարգային ծախսերի սահմանման վերանայում.

ժդ) հայտի հաստատված պատճենների տրամադրում.

3. Կիրարկող կանոնակարգը և տուրքերի մասին կանոնակարգը ընդունվում և փոփոխվում են հոդված 109«2»-ով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 108

Բողոքարկման խորհուրդների ընթացակարգային կանոնները

Բողոքարկման խորհուրդների ընթացակարգային կանոնները կիրառվում են այդ Խորհուրդների կողմից սույն Կանոնակարգի համաձայն քննվող բողոքների նկատմամբ՝ չհակասելով հոդված 109«2»-ով սահմանված կարգով կատարված անհրաժեշտ ճշգրտումներին կամ լրացուցիչ դրույթներին:

Հոդված 109

Կումիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Կումիտեն:
2. Այն դեպքում, երբ հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման հոդված 5«6»-ով սահմանված ժամկետը պետք է լինի երեք ամիս:

3. Կումիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 110

Անցումային դրույթ

1. Նախքան այս հարցի վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկի հիման վրա սույն Կանոնակարգի փոփոխություններն ուժի մեջ մտնելը, Համայնքի արդյունաբերական նմուշով պահպանություն չի տրամադրվի որևէ արդյունաբերական նմուշի, որը համալիր արտադրանքի բաղադրիչ մաս է կազմում՝ հոդված 19«1»-ի իմաստով օգտագործվելով այդ համալիր արտադրանքի վերանորոգման համար՝ դրա սկզբնական տեսքը վերականգնելու նպատակով:
2. 1-ին պարբերությունում նշված՝ Հանձնաժողովի առաջարկը ներկայացվում է թիվ 98/71/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածի համաձայն նույն հարցի վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկած փոփոխությունների հետ միասին և դրանք հաշվի առնելով:

Հոդված 111

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 60-րդ օրը:
2. Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերը կարող են Գրասենյակ ներկայացվել Գրասենյակի ղեկավարի առաջարկության հիման վրա՝ Վարչական խորհրդի կողմից սահմանված թվականից սկսած:

3. 2-րդ պարբերությունում նշված թվականին նախորդող երեք ամսվա ընթացքում ներկայացված Համայնքի գրանցված արդյունաբերական նմուշների հայտերը համարվում են ներկայացված այդ թվականին:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2001 թվականի դեկտեմբերի 12-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Մ. Էլվոետ